



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԱ. Տարի - ՅՈՒՆԻՍ 1935



11^{me} Année - June 1935



Խմբագրական

Սուրբ Գրքի դերը մեր եզգային կեանքին մէջ

Գ. Գ. Խ.

Հոգ. կեանք

Ս. Հոգիին գործունէութիւնը

J. Studle

Շարաթական անձնաքննութիւն

Ա. Օ. Փափազեան

Սուրբ Օգոստինոսի խոստովանութիւնները

Թարգ. Զ. Բ. Պուտաքեան

Կենաց ածուներէն

Մաէլսթրոմ

Թարգ. Զ. Բ. Պուտաքեան

Անհատաւոր

Սամուէլ Պ.

Յիսուսի ակնարկը առ Պետրոս

Վեր. Մ. Տէր Սահակեան

Ս. Գրական ուսումնասիրութիւն

1) Թովմաս առաքեալ, 2) Մատթէոս առաքեալ

Գ. Գ. Խ.

Մարգարէական նշաններ

Տէրը կուգայ

Ա. Օ. Փ.

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչութիւններ

Մանկանց սիւնակ

Մատամ Բօնթէսի երազը

Վերնըր

Լ. Ս.



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերեր թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնածերքն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կըզգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բոլորի ճշմարիտ «Բանօրն»
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերեր երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտէյի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳՅԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
դիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԳԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ԹՈՒՐԳԵՐԷՆ միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 25 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ ղրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Ֆրանսայէ դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Արթնցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մանեկու խոտամունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Երբ. Ժ. 37

ԺԱ. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 1935

ԹԻԻ 6

և Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԴԵՐԸ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

«Բանբեր»ի Մարտի թուոյն մէջ ջանացինք պարզել թէ Սուրբ Գրքի հայերէն թարգմանութիւնը պատճառ եղած է մեր գրերու գիւտին, մեր գրական լեզուի կերտման, ճոխացման ու գեղեցկացման եւ մեր գրականութեան ծլարձակման ու ծաղկումին: Այս յօդուածով մեր նըպատակն է շօշափել մի քանի կէտեր ալ այն կարեւոր դերէն, զոր Սուրբ Գրքը կատարած է մեր ազգային կեանքին մէջ:

Ա. Սուրբ Գրքը առիթ տուած է կրթութեան տարածման: Մեր լուսամիտ ու իմաստուն բարերարները Սահակ Պարթեւ եւ Մեսրոպ Մաշտոց չխորհեցան կաթողիկէ եկեղեցւոյն նման միայն կղերին սեփականութիւնը դարձնել Սուրբ Գրքի ընթերցումը, հապա անոնք գացին շաւղէ մը, ուրկէ տասն ու մէկ դար յետոյ միայն պիտի ընթանար մեծ բարեկարգիչը՝ Մարթին Լուտեր: Անոնք ջանացին Ս. Գրոց ընթերցումը սեփականութիւնը դարձնել կարելի մեծ բազմութեան մը: Ուստի իրենց այդ նպատակին հասնելու համար զարկ տուին ոչ թէ միայն վանական զբոսներու, ուր ընդհանրապէս կրօնաւորներ կը պատրաստուէին, հապա ամէն կողմ բացին նաեւ տարրական դպրոցներ ժողովուրդի մանուկներուն համար: Եղիշէի եւ Ղազար Փարպեցիի պատմութիւններէն կարելի է եզրակացնել թէ վարդանանց պատերազմին յաջորդող տաղնապի օրերուն շատեր, նոյնիսկ կիներ, գիտէին կարդալ եւ կրնային ինքզինքնին մխիթարել ու քաջալերել Սաղմոսներու, մարգարէներու եւ Աւետարաններու ընթերցումով: Հայոց մէջ այնքան մեծ էր քրիստոնէական դաստիարակութեան սէրը այդ տարիներուն, որ աքսորական նախարարներ՝ նոյնիսկ իրենց կապերուն մէջ՝ կարդալ սորվե-

ցուցին իրենց կրտսեր վիճակակիցներուն: Քրիստոնէական դաստիարակութեան եւ դպրոցի ընծայուած այս սէրը ատկէ յետոյ այլեւս ժառանգ մնաց հայերու՝ սերունդէ սերունդ: Պատերազմական աւերներէ ու կոտորածներէ հազիւ աչքերը բացած հայը միշտ իր առաջին գործը նկատեց շինել իր եկեղեցին եւ անոր քով իր դպրոցը: Այո՛, ան նոյնիսկ Տէր Զօրի աւագուտին վրայ գըրելով՝ ջանաց կարդալ սորվեցնել իր զաւկին: Կրթութեան հանդէպ ունեցած այս սէրը հայը մղեց աւելի ունենալու մտքի բարձր գարգացում, քան թէ զինք շրջապատող ու իր վրայ տիրող ազգերը. եւ այս՝ անիկա կը պարտի Սբ. Գրքին: Աս էր որ ծնաւ հայուն դպրոցը, ինչպէս նաեւ գրականութիւնը եւ սքանչելի մանրանդկարչութիւնն ու մշակոյթը:

Երկրորդ՝ Սուրբ Գրքը խորացուցեր է մեր մէջ ընտանեկան նուիրականութեան զգացումը: Ինչպէս որ Արա Գեղեցիկի եւ Տիգրան Երուանդեանի աւանդութիւնները կը յայտնաբերէին, հայը իր ցեղային խառնուածքով իսկ մեծ հակում ունի ընտանեկան մաքուր, սուրբ կենցաղի: Ահա՛ հայուն այդ ցեղային աստուածատուր յատկութեան ընդառաջ գացած է Սուրբ Գրքը եւ զայն աւելի հաստատած, զօրացուցած ու սրբացուցած է: Հայը ոեւէ ժողովուրդէ աւելի ըմբռնած ու գործադրած է Պօղոս Առաքեալի պատգամները ընտանեկան յարկի նկատմամբ, «Ամուսնութիւնը սուրբ է ու անկողիւնը անարատ»: Կիները իրենց այրերուն հնազանդ ըլլան: Այրե՛ր սիրեցէք ձեր կիները, ինչպէս Քրիստոս ալ սիրեց եկեղեցին, ու իր անձը անոր համար մատնեց: Որդիներ, ձեր ծնողներուն հնազանդ եղէք, եւ զուք, հայրե՛ր, ձեր որդիները մի բարկացնէք,

հապա դանոնք մեծցուցէք Տէրոջը վարժութիւնովն ու խրատովը:

Սուրբ Գրքի այս եւ ասոնց նման պատուէրներուն ազդեցութեամբ ունեցած ենք հայ ընտանիքներ, որոնք իրիմեան Հայրիկի նկարագրած «Դրախտի ընտանիք»ին կը նմանէին եւ կը փալլէին իրենց ժուժկալ, մաքուր, համերաշխ եւ աստուածավար կեանքով: Սուրբ Գրքը այս դէպքը կատարեց մանաւանդ բարձրացնելով կոնշդիւքը եւ իրական մայրեր պատրաստելով ժողովուրդին համար: Այս իրականութիւնը ի յայտ կուգայ դարձեալ ամենէն աւելի վարդանանց պատերազմի ժամանակ: Մինչ հայ աշուր իր կեանքը կը զոհէր իր ընտանիքին, հայրենիքին եւ քրիստոնէական կրօնին համար, հայ փափկասուն ազնուական կիներն ալ սիրայօթար ինքզինքը կ'ենթարկէր զրկանքներու — կը հրաժարէր իր խորտիկներէն ու փառաւոր զգեստներէն ու կը բաւականանար բանջարեղէններով ու պարզ հագուստներով՝ իր աքսորական ամուսնոյն օժանդակելու համար, եւ ձգելով իր հանգստ աւէտ բընակարանը՝ կը քաշուէր լեռներն ու անտառները՝ իր ամուսնոյն հաւատարիմ մնալու եւ իր զաւակները Քրիստոսի վախին ու սիրոյն մէջ դաստիարակելու նպատակաւ: Ահա ինչ որ Ղազար Փարպեցիին կ'ըսէ այդ մասին: «Արքունի զուռը բանտարկուած մարդոց կիները, հակառակ որ իրենք ալ նեղութեան մէջ էին, սակայն կ'ուսուցանէին եւ բազում հոգածութեամբ ուսուցանել կուտային եւ կը խրատէին... Ապագային մանուկներուն օգուտ բերելիք հրահանգները շքեղաբար կը հոգային ու կը մատակարարէին: Մանաւանդ Սուրբ Վարդանի եղբօրը նահատակ Հմայեակ Մամիկոնեանի կինը (Չուիկ) որ անուանի կին եղաւ եւ ամէն ընտիր ու մտաւոր բարեմասնութեանց կողմէ Հայաստան աշխարհիս բոլոր կիներուն մէջ գերազանց գանուեցաւ, իր որդիները (Վահան եւն) սնուց ու կրթեց Գուգարաց երկրին մէջ(1): Այդ որդիներէն մին է Վահան Մամիկոնեան, որ յետոյ յաջողութեամբ ի կատար հանեց իր հօրեղբօր Վարդանի գործը:

Ահա իրենց այս սուրբ ու առաքինի քոյրերուն օրինակին հետեւած են ամէն դարու եւ ամէն հայկական նահանգի մէջ բիւրաւոր հայ մայրեր ու կիներ: Ո՞վ կրնայ հաշիւը տալ այն հայ կի-

.....

(1) Կարդա Վեր. Ե. Փաստնիի «Յետ Ռսկեդարեան Հայ Դպրոցը» կոչուած ուսումնասիրութիւնը, «Կոչնակ» 15 եւ 29 Գիկտ. 1934:

ներուն. որոնք թէեւ կրնային վերջին տարագրութեան հանգիստ կեանք մը ապրիլ՝ կենակցելով թուրքի մը հետ, բայց յօժարեցան անհուն տուայտանքներու եւ սովահարութեան ու սրածուրթեան՝ ընտանեկան սրբութեան դէմ չմեղանչելու համար: Եւ որո՞ւ ծանօթ չեն մայրեր, որոնք երկար ատեն պանդխտի ճամբայնայած են կամ երկարատեւ որբեւարութեան մը դառնութիւնները ճաշակած, բայց ապրած են անարատ ժուժկալութեամբ եւ կերակրած ու դաստիարակած՝ իրենց զաւակները անհուն զրկանաց զնով: Ընտանեկան այս մաքրութիւնն ու անձնութիւնը պտուղն են Սուրբ Գրքի: Թէեւ այդ հերոսուհիներէն շատեր կարգաւ խի չէին գիտեր, բայց ոեւէ կերպով անոնց սրտին մէջ ինկած էր ընտանեկան առաքինութեանց նկատմամբ, աւետարանական խօսք մը, որ փորձութեան եւ տառապանքի օրերուն կը զգուշացնէր կամ կը խճրախուսէր զիրենք:

Երբորդ՝ Սուրբ Գրքը հայուն սորվեցուց թէ կ'արժէ այս կեանքը զոհել Քրիստոսի սիրոյն համար: Ասոր ալ գործնական ապացոյցը կը գտնենք Վարդանի ու իր ընկերներու գործին մէջ: Իրաւունք ունինք Սուրբ Գրական չնկատելու անոնց արարքը, առ երեսու ուրացումը, որու համար իրենք ալ յետոյ զղջացին: Կրնայ մէկը նաեւ դէմ ըլլալ քրիստոնէութիւնը սրով պաշտպանելու տեսակէտին, այսու ամենայնիւ անուրանալի իրողութիւն մըն է թէ Վարդանանց մահը իր էութեամբ մարտիրոսութիւն էր: Անոնց մեծ մասը յօժարակամ ու զիտակցօրէն զոհեց զիրք ու ստացուածք, ընտանիք ու կեանք Քրիստոսի սիրոյն. գանոնք չկրցաւ իրենց հաւատքէն խախտել «ո՛չ սուր, ո՛չ հուր, ո՛չ ջուր եւ ո՛չ ալ ուրիշ ոեւէ դառն հարուած»: Տառապանքը դիմազրաւեցին աղաղակելով, «Պատրաստ ենք հալածուելու եւ՝ մեռնելու, նեղութիւններու, հալածանաց եւ չարչարանաց՝ Սուրբ եկեղեցւոյն համար, եւ մահուան գիրկը նետուեցան ըսելով, «Թող մեր մահը արդարներու մահուան հաւասար նկատուի եւ մեր արեան հեղումը սուրբ մարտիրոսներու արեան»: Այսպէս կ'ըսէ Նղիշէ պատմագիրը պատերազմիկներու համար, իսկ ոչ-պատերազմիկներու համար կ'աւելցնէ, «Հարսները ելան առաքաստներէն, փեսաները սենեակներէն, ծերերը ինկան աթոռներէն ու մանուկները զերկերէն: Կը նախընտրէին անասուններու նման քարանձաւներու մէջ բնակիլ ու աստուածալաշտութեան մէջ մնալ, քան թէ ուրանալ ու տուներու մէջ ապրիլ փափկութեամբ: Առանց տրտնջելու կը

համբերէին խոտեղէն կերակուրներու և չէին յիշեր իրենց սովորական խորտիկները: Սաղմոսներն էին անոնց երգերու մրմունջները եւ Սուրբ Գրոց ընթերցումը անոնց կատարեալ ուրախութիւնը»:

Անոնք կրցին այս զոհը բերել, քանզի հայերէնի նոր թարգմանուած Սուրբ Գիրքը անոնց մտքի խաւարը ցրուած էր. անոնք բաց աչքերով «կը տեսնէին բերկրալի յոյսը», ապրումն ունեցած էին թէ «Նա, Որ անմահ էր, այնքան սիրեց զմեզ, մինչև մահն յանձն առաւ, որպէսզի մենք իր մահուամբ յաւիտենական մահէն ազատինք, եւ կենաց պսակին՝ «անեղծ ու անարատ եւ անթառամ ժառանգութեանը արժանանանք»: Կարճ անոնք սիրով մարտիրոսացան, քանզի գիտէին թէ եթէ Քրիստոսի հետ մեռնին, անոր հետ պիտի ապրին ալ. և «իրենց կեանքը մահ կը համարէին, մահն ալ կեանք»:

Այսպէս Սուրբ Գիրքը Վարդանի եւ իր ընկերներուն սորվեցուց զոհել ինչք ու կեանք, մեռնիլ ոչ թէ կուրօրէն ու ակամայ, հապա սիրալոյսով ու գիտակցօրէն յաւիտենականին ու Քրիստոսի համար — սորվեցուց մարտիրոսանալ: Հայ եկեղեցիին ու հայ ազգին սերմը եղած է արիւնը. այդ եւ ուրիշ հազարաւոր մարտիրոսներու արիւնը, որոնք ընթացած են Վարդանի գծած շաւղէն եւ այդ մարտիրոսներու արիւնը եղած է հայ եկեղեցւոյ ու հայ ազգին սերմը: Առանց այդ արեան տուրքին այժմ գոյութիւն չպիտի ունենար ո՛չ մին եւ ո՛չ միւսը: Քանի որ Վարդանի օրերէն մինչև մեծ աղէտը միշտ ալ գտնուեցաւ զէթ փոքր կորիզ մը, որ յօժարակամ ու գիտակցօրէն Քրիստոսի համար զոհուեցաւ, պահուած է քրիստոնէութիւնը մեր մէջ եւ անոր շնորհիւ ալ մեր ազգը:

Ահա՛ դերը, զոր ունեցած է Ս. Գիրքը մեր ազգային կեանքին մէջ: Ան մղած է հայը գտնելու իր գիրը, կերտելու իր զրական լեզուն, հիմնելու իր դպրոցները, ծնած է մեր զրականութիւնն ու մանրանկարչութիւնը, ազնուացուցած է մեր ընտանեկան յարկն ու մեր բարքերը, տուած է մեզի մեր քրիստոնէական կեանքին համար տիպար նկարագիրներ եւ ցուցուցած է մեզի ու միշտ կը ցուցնէ երկնաւոր յաւիտենական ճամբան, մանաւանդ Քրիստոսը, Կենաց Բանը, մեր Փրկիչը, յաւիտենական կեանքի ճամբան, Կենաց հացը, մեր կեանքը, մեր ամէն բանը: Ուստի չ'արժեք որ ամէն հայ, մանաւանդ երիտասարդը, կարդայ, յարգէ ու սիրէ զայն եւ հետեւի անոր գծած շաւղին:

Գ. Գ. Խ.

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՌԹԻՒՆԸ

○○○○○

Հոգիին գործը մարդկային պատմութենէն աւելի հին է եւ ետ կ'երթայ մինչեւ սկիզբը: Սաղ. 17. 6ի մէջ կը կարդանք թէ «Տէրոջը խօսքովը երկինք ստեղծուեցաւ, ու իր բերնին Հոգիովը՝ Անոր բոլոր գօրքը»:

Յոր կը բացազանչէ, «Զիս Աստուծոյ Հոգին ստեղծեց, ու Ամենակարողին շունչը ինծի կեանք տուաւ» Յոր 17. 4: Ուրեմն Սուրբ Հոգիին գործունէութիւնը մարդուն անկումէն առաջ անկասկած տարբեր ըլլալու էր քան թէ անկէ վերջը, քանզի այն ատեն մարդկը պատժելու էր (Ծնդ. 2. 3): Անկէ յետոյ իր գործը մարդկային խղճին հետ եղաւ (Հոով. Բ. 15): Ուստի աշխարհի վրայ չկայ եւ եղած չէ մէկը որուն մէջ այս կերպով Նա ինքզինքը յայտնի ըրած չըլլայ: Այս ձայնը խեղդելու փորձը մինչեւ այսօր բնաւ պակասած չէ, բայց ուր Նա բաց ականջներ գտաւ (օր. Աբրահամի, Մովսէսի ու Հին Ուխտի նահապետներուն մէջ) անոնց կեանքին բոլորովին տարբեր ընթացք տուաւ: Իրմէ կանչուած մարգարէները իր մասնաշաղկապով ծառայութեան մէջ մնացին եւ ստիպուած էին այնպիսի պատգամներ տալու, զորոնք լսել իրենց իսկ դժուար կուգար:

Սուրբ Հոգիին գործունէութիւնը Հին Կտակարանին մէջ ամենէն զօրաւոր կերպով ի յայտ եկաւ օրէնքին մէջ (Հոով. Է. 14): Միեւնոյն ատեն Հոգին կը նախաստորաստէր եւ կը ղեկավարէր ամէն ինչ դէպի Այն՝ որ գալու էր որպէս արդարութեան Արեգակ եւ փրկութիւն՝ ամէն բան կարգի դնելու եւ ամէնը իր թեւերուն տակ առնելու (Մաղ. Գ. 20):

Սուրբ Հոգիին գործունէութիւնը Հին Կտակարանին մէջ բացորոշապէս տարբեր էր քան Նոր Կտակարանին մէջ: Զանազան ժամանակներու մէջ եւ զանազան միջոցներով Ս. Հոգին անցողակի եկաւ մարդոց վրայ, գործեց անոնց վրայ դուրսէն դէպի ներս: Նոր Կտակարանին մէջ սակայն մարդոց մէջ օժեւեւան կը գտնէ, անոնց մէջ կը բնակի եւ կը գործէ ներսէն դէպի դուրս, եւ այս կերպով Աստուծոյ հետ կատարեալ հաղորդակցութիւնը երեւան կը բերէ:

Յիսուս, երկրորդ Ագամը ոչ միայն Ս. Հոգիով յղացուած էր (Ղուկ. Ա. 35) եւ առանց մեղքի չափահասութեան հասաւ, հապա պատահեցաւ

այն ինչպէս որ Յովհաննէս Մկրտիչի ըստեցաւ, «Որու վրայ տեսնես Հոգին, որ կ'իջնէ ու կը հանգչի Անոր վրայ» (Յովհ. Ա. 33): Որովհետեւ Անիկա մինչեւ այդ օր Ս. Հոգիին ազդեցութեան տակ կեցեր էր կատարեալ հնազանդութեամբ, այդ պատճառաւ ալ Ս. Հոգին առաւ զինքը Իր ձեռքին մէջ անընդմիջելիօրէն, այնպէս որ Հօրը գիտակից ներկայութիւնը Իր մէջ այնպիսի իշխանութիւն եւ հեղինակութիւն մը երեւան բերաւ, որ ունէ մարդ երբեք ունեցած չէ: Այս Հոգիին զօրութիւնով նա հնազանդ եղաւ մինչեւ խաչին մահուանը (Փիլ. Բ. 8) մահուան կապիւրը քակեց եւ Աստուծոյ զօրութեան աջ կողմը նստաւ:

Այս մկրտութիւնը, որմէ նա կը տաճնապէր, (Ղուկ. ԺԲ, 50), մկրտուելէ յետոյ նա ընդունեց զօրութիւնը մկրտելու զանոնք որոնք հաւատքով Իրեն կը հետեւէին (Գործ. Բ. 33): Փրկութեան եւ հաշտութեան մեծ գործին մէջ, զոր Տէրը կատարեց, չենք կրնար բաւականաչափ շեշտած չըլլալ նաեւ Ս. Հոգիին զօրութեանը:

Իր հրաժեշտի խօսքին մէջ մեր Տէր Յիսուս կրկին ու կրկին մատը կը դնէր Հոգիին վրայ, զՈր Ինք Հօրմէն պիտի ղրկէր Իրենց (Յովհ. ԺԵ. 26) զԻրենք ամէն ճշմարտութեան առաջնորդելու (Յովհ. ԺԶ. 13): Անոնք Իրմէ աւելի պէտք ունէին այս Զօրութեան, վկայ ըլլալու մինչեւ աշխարհի վերջը: Յետ այսու նա ոչ թէ անոնց քով, հապա անոնց մէջ պիտի բնակէր եւ զանոնք Իր աստուածային բնութեան հաղորդ ընէր: Ուստի Պենտեկոստէն յետոյ էր որ անոնց փորձն կենդանի ջուրեր վազեցին (Յովհ. Է. 38): Քրիստոս Իրենց մէջ (Կող. Ա. 27) ըլլալով էր որ Իր եւ աշակերտաց միջեւ անբաժանելի կենաց հաղորդակցութիւն մը հաստատուեցաւ եւ այն կերպով միայն կրցան անոնք Քրիստոսի խաչին էութիւնը հասկնալ, — Անիկա Իմինէս պիտի առնէ եւ Ձեզի պատմէ (Յովհ. ԺԶ. 15), անոնց Հոգիով Աստուծոյ ընտանութիւնը ըլլալէն յետոյ: Անոնց ուրիշ լեզուներով խօսելովը, մարգարէանալովը եւ հիւանդներ բժշկելովը չէր Պենտեկոստէն, հապա անոր յարակից նշանները միայն եւ աշակերտները բռնուեցան Սուրբ Հոգիին կողմէ Իրենց իմացականութեամբը, կամքովն ու էութեամբը հրնազանդելու Անոր եւ Քրիստոսի սիրոյն համար վկայելու առանց մարգկային վախի: Անոնք չէին կրնար չխօսիլ (Գործ. Դ. 20) հակառակ ամէն ըստ պառնալիքի: Անոնց մէջ Հոգիին ամենէն զեղեցիկ պտուղը սէրն էր, ըզխած մաքուր սրտէ մը (Գաղ. Ե. 22):

Կորնթացւոց եկեղեցիին մէջ Հոգիին պարգեւները ցցուն դիրք գրաւած էին, այնպէս որ Պողոս առաքեալ ստիպուած կ'զգար ինքզինքը, աւելի աղէկ ճամբայ մը ցոյց տալու անոնց Ա. Կորնթ. ԺԳ. գլուխովը:

Ամենօրեայ մեռնիլը (Ա. Կոր. ԺԵ. 34) Սուրբ Հոգիին հաւատքով ընդունուած կեանքին առաւելութիւնը եւ ճոխութիւնը երեւան կը բերէ, «Ամէն բանի կարող եմ Անով որ զիս զօրացուց» (Փիլ. Դ. 13): Եթէ վառող ճրագին իւրը հատնելու ըլլայ, խնդիր չէ, ի նորոյ կրնայ լեցուիլ: Միայն եւ միայն այս օրական եւ վայրկեանական առաջնորդութեան սպասելը (անձնական եսին ուրացումով) զմեզ կը պահէ արթուն ու պատրաստ, ունէ ատեն ինքզինքը յայտնող Փրկչին վալուսալը ուրախութեամբ ողջունելու (Մատթ. ԻԵ. 43):

Այս սպասելը հասկնուելու չէ այնպէս որպէս թէ հաւատացեալը միայն իր անձնական փրկութեան համար մտածելու է, քանզի Սուրբ Հոգիին զօրութեանը իրենց համաձայն է Քրիստոսի խօսքին որ ըսաւ, «Դուք Իմ վկաներ» պիտի ըլլաք ...մինչեւ աշխարհիս վերջը» (Գործ. Ա. 8), այսինքն վկաներ մինչեւ Անոր զալստեան վայր կեանք:

Ս. Հոգիին եւ Աստուծոյ խօսքը միասին կը գործեն: Վերջինին մէջ Աստուծոյ զաղափարները դրուած են Սուրբ Հոգիին ազդեցութեան տակ, ուստի Անոր զօրութեանը իրենց թէ Աստուծոյ խօսքին սերմերուն կենսատու ոյժ տալու է եւ թէ այն սրտին՝ արտին, որուն մէջ կը ցանուին այդ սերմերը:

Աստուծոյ խօսքին ուսուցումը կրնայ բոլորովին Սուրբ Գրական ու ճիշդ ըլլալ, բայց դարձեալ ապարդիւն մնալ, եթէ անոր քարոզողը իր անձնական հոգիէն խօսի: Միայն Սուրբ Հոգին է որ Ս. Գրքին կնիքները կը քակէ եւ միայն Անիկա կրնայ իրական արթնութիւն ու ապաշխարութիւն երեւան բերել: Եթէ մէկը արուեստական կերպերով արթնութիւն երեւան բերել կ'ուզէ, հակառակ կը գործէ Քրիստոսի խօսքին «Հոգին է կենդանի ընողը, մարմինը շահ մը չընէր» (Յովհ. Զ. 64): Բաց աստի այդպիսի արթնութիւններ խորութիւն չեն ունենար:

Սուրբ Հոգիին ուրիշ մէկ զօրութեանը իրենց Հոգիի միաբանութիւնն է (Եփես. Դ. 3) որ ունենալով հանդերձ զանազան պարզեցներ, հեղուկութեամբ, խոնարհութեամբ եւ համբերութեամբ կրնայ կրել նաեւ այն եղբայրը, որ ստորագաս խնդրոց մէջ քիչ մը տարբեր կը մտածէ: Եկեղեցւոյ մէջ բաժանումը բնաւ Քրիստոսի մտքին

համաձայն չէ: 25° ու Նա խնդրեց Հորմէն որպէս-
զի ամէնը մէկ ըլլան (Յովհ. ԺԷ. 21): Արդ, ինչ-
պէս որ միայն մէկ զլուխ կայ, կայ նաեւ միակ
մէկ մարմին մը, եւ այս ոչ թէ մասնաւոր եկե-
ղեցական կազմակերպութիւն մըն է, հապա միա-
բանութիւնը սրբոց, որոնք միեւնոյն Հոգիով մէկ
մարմին ըլլալու մկրտուած են (Ա. Կոր. ԺԲ. 13):
Ամէն մարմն ուր եւ բաժանողական գործունէ-
ութիւն օտար է Աստուծոյ Հոգիին:

Սուրբ Հոգիին գործունէութիւնը Աստուծոյ հե-
ռացած եւ ինքնարգար մարդոց մէջ կ'սկսի նախ
զանոնք համոզելու մեղքի համար (Յովհ. ԺԶ. 8):
Այս առաջին գործին նպատակն է մեղքը այն-
պէս ցոյց տալ, ինչպէս որ Տէրը կը տեսնէ զայն,
եւ ատոր ի հետեւան զղջում եւ ապաշխարու-
թիւն երեսն բերել որ զղջանալու բան չէ (Բ.
Կոր. Է. 10):

Որքան որ մեղաւորը ինքզինքը կորստած
զգայ ու ճանչնայ, նոյնքան աւելի շատ Ս. Հոգին
իր աչքերը կը բանայ առ Քրիստոս, որ եկած է
մեղաւորը փնտռելու եւ փրկելու (Մատ. ԺԸ. 11):
Հոն ուր մարդս պատրաստ է հաւատալու Անոր,
որ անաստուածը կ'արդարացնէ (Հոով. Դ. 5), հոն
Սուրբ Հոգին կը յայտնէ Քրիստոսը (Յովհ. ԺԶ.
14) պարզելով Անոր արեան գորութիւնը որ մեղ
ամէն մեղքէ կը սրբէ (Ա. Յովհ. Ա. 7) եւ այն
հիման վրայ որ Քրիստոս ամէն բան կատարեց,
կ'սկսի արդարացումը, եւ վերստին ծնունդը եւ
նոր ստեղծումը ըլլալը, որուն մասին Պօղոս ա-
ռաքեալ Բ. Կոր. Ե. 17-ի մէջ կը խօսի: Հին մար-
դուն կը փոխանորդէ նորը (Եփես. Դ. 24), Սուրբ
Հոգիին նորոգութիւնովը, ներքին մարդուն մէջ
բնակելով ու Աստուծոյ որդիութեան վկայութիւ-
նովը (Հոով. Ը. 16):

Այս բանը տեղի կ'ունենայ, երբ մեղքերը ոչ
միայն Աստուծոյ առջեւ կը դրուին եւ կը խոս-
տովանուին, հապա ի պահանջել հարկին նաեւ
մարդոց՝ եղած փնտռները հատուցանելու պատ-
րաստակամութեամբ (Յակ. Ե. 16): Հոս Սուրբ
Հոգին իւրաքանչիւրին պարզօրէն պիտի ցոյց
տայ իր ընկելքը, որքան որ ինքը շատ պատ-
րաստ ըլլայ հնազանդելու, այսինքն Սուրբ Հո-
գին չմարելու (Ա. Թեա. Ե. 19), Անոր չհակառա-
կելու (Գործ Է. 51), զԱյն չտրտմեցնելու (Եփես.
Դ. 30):

Երբ այս ընթացքը չխափանուիր մեր կողմէն,
մեր մէջ ցանուած կենդանութեան սաղմէն կըր-
նայ Հոգիին գորութեան մնայուն շուրջը հոսիլ,
զօրաւոր ընկելով զմեզ Իր Հոգիովը (Եփես. Դ. 16):

Յաւալի է որ կան հաւատացեալներ, որոնք

«կուշտ» են, կը խորհին թէ ներքին նորոգումով
ամէն բան իր կարգին է: Այս սխալ է: Ս. Իւղը կը
հոսի եւ երթալով առատութեամբ՝ միայն հոն, ուր
ամանը կը պարպուի հին եւ մարմնաւոր էութե-
ան: Ներքնապէս աղքատութեան եւ տկարու-
թեան զգացումները պիտի աւելնան եւ միւս կող-
մէ պիտի աճի Անոր լեցունութեան զերազանց
գորութեան ուրախ վստահութիւնը: Եթէ ցորենի
հատը մեռնի, այն ատեն, եւ միայն այն ատեն
արգիւնք կը բերէ (Յովհ. ԺԲ. 24):

J. STUDLE

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԱՆՁՆԱՔՆՆՈՒԹԻՒՆ

ooo

(ՍԵՐՏԷ, ԱՂՕԹԷ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԷ)

ԻԶ. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Մաղ. Գ. 16: Ա. 3, 7: Ա. Կոր. Ա. 9: Ժ. 16-17:
Փիլ. Դ. 10: Ա. 1-2: Կոր. Ա. 12: Դ. 16: Սաղ. ԽԲ.
4: ՃԺԺ. 63: Դան. Բ. 17-18: Մատ. ԺԸ. 20: Յովհ.
ԺԷ. 24: Եբր. ԺԴ. 16:

Կը վայելէ՞ս սուրբերու հաղորդութիւնը:

ԻԷ. ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սաղ. ՃԼԴ. 1-5: ԽԲ. 4: Մատթ. ԺԸ. 19: Յովհ.
ԺԷ. 11, 21, 23: Գործ. Բ. 1, 44: Դ. 24: Ե. 12: ԺԵ.
25: Եփես. Դ. 3-6: Փիլ. Բ. 2: Եփես. Դ. 13: Ա. Կոր.
Ա. 10: ԺԲ. 13: Յովհ. Ժ. 16: Եփես. Բ. 19-22:

Միաբանութիւն ունի՞ս:

ԻԸ. ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆ

Ելից ԺԺ. 6: Յայտ. Ա. 6: Ե. 10: Թուոց Ժ. 8:
Բ. Օրին. ԺԸ. 1, 2: Ա. Թագ. Բ. 35: Բ. Մնաց.
2. 41: Եղեկ. ԽԴ. 21: Մաղ. Բ. 7: Բ. Կոր. Ե. 20:
Ա. Պետ. Բ. 5, 9: Յայտ. Ի. 6:

Քահանայական գործք կը կատարե՞ս:

ԻԹ. ԼՈՅՍ

Ծննդ. Ա. 3: Յովհ. Ա. 4, 9: Ա. Յովհ. Ա. 5, Բ.
10: Բ. Թագ. ԻԲ. 29: Առակ. Դ. 18: Ժող. ԺԱ. 7:
Եսայ. ԽԲ. 6: ԽԺ. 6: Գործ. ԺԴ. 47: Եսայ. Կ. 1,
19: Մատթ. Ե. 14-16: Փիլ. Բ. 15: Յովհ. Ը. 12. Ժ.
5: Ա. Թեա. Ե. 5: Եփես. Ե. 8:

Լուսոյ կեանքը ունի՞ս:

ՍՈՒՐԲ ՕԳՈՍՏԻՆՈՍԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԳԻՐԲ Գ. ԳԼՈՒԽ 11

Իր մօր հոգեմքներն ու արցունքները

Եւ Դուռն Քու ձեռքդ վերէն երկարեցիր ու այս խոր խաւարէն իմ հոգիս դուրս քաշեցիր, ինչու որ Քու առջեւդ, հաւատարիմ աղախինդ, մայրս, իմ վրաս կուլար, ուրիշ մայրերու դադաղի մը վրայ թափած արտասուքներէն աւելի արցունքներ թափելով: Նա կը տեսնէր որ ես մեռած էի այն հաւատքին, այն հոգիին, որ Քեզմէ ստացած էր եւ Դուռն քեն պատասխանեցիր Տէր: Պատասխանեցիր իրեն եւ չանարգեցիր այն արցունքները որուն հեղեղը իր աչաց տակ՝ գետինը կ'ողողէր: Ամէն ուր որ Իր աղօթքը կը հոսէր, պատասխանեցիր իրեն: Քանզի ուսկից կրնար դալ այն երազը որ այնքան մխիթարութիւն բերաւ իրեն, որով կը տեսնէր թէ ես բաժնեկից եղած էի իր բնակութեան եւ իր սեղանին, որոնցմէ հեռացած էի քիչ մը առաջ, իմ հերետիկոսութեանցս հայհոյութիւններով, զինք զգուանքի ու սոսկումի մէջ ձգելով:

Իրեն կը թուէր թէ կանգնած էր փայտէ քանակի մը վրայ, երբ տեսաւ որ իրեն կը մօտենար լուսաշող երիտասարդ մը որ խաղաղ՝ կը ժպտէր իր խոր եւ տխուր տառապանքին վրայ: Չէ՛ թէ հետսքրքիր մարդու, այլ սորվիլ փափաքողի մը շեշտովը կը հարցնէ իր արտամութեան եւ ամենօրեայ արցունքներուն պատճառը, եւ մօրս պատասխանին վրայ թէ իմ կորուստս է որ կ'ողբար, անոր կը հրամայէ ա՛լ չհարչարուիլ, բայց ուշադիր գիտել որ, ուր որ ինք էր, ես ալ հոն էի: Նայեցաւ եւ զիս ալ տեսաւ իր քովը, նոյն քանակին վրայ կանգնած: Ո՛հ, Ամենակարող Բարութիւն, անտարակոյս Դուռն Քու ազանջդ իր սրտին բացած էիր, Դո՛ւն որ մեզմէ իւրաքանչիւրին հոգ կը տանիս որպէս թէ միակը ըլլար

1. ՅՈՅՍ

Սաղմ. 1Թ. 7: ՃԺԺ. 81: Ճ1. 7: ՃԽԶ. 5: Երեմ. Ժ. 7: Գործ. ԻԶ. 6-7: Տիմ. Ա. 2: Գ. 7: Հոով. ԺԵ. 13: Կող. Ա. 23, 27: Հոով. Դ. 18: Ե. 2-5: Ա. Պետ. Ա. 3: Տիմ. Բ. 13: Հոով. Ը. 25: Ա. Յովհ. Գ. 3:

Յուսով լեցուն ես:

Ա. Օ. ՓԱՓԱԶԵԱՆ

Փօնտ Օպէնսոն

ան, եւ բոլորին համար կ'ընես, ինչպէս անհատին համար:

Եւ — իբր Քու շնորհքիդ մէկ նոր վկայութիւնը — մինչ ես կ'աշխատէի զայն քաշքշել այն յոյսին թէ օր մը թերեւս ինքն է որ պիտի ըլլայ ինչ որ ես էի, նա նոյն պահուն իսկ անմարան պատասխանեց.

— «Ո՛հ, չըսուեցաւ ուր որ ինքն է դուռն ալ հոն պիտի ըլլաս, այլ ուր որ դուռն ես ինք ալ հոն պիտի ըլլայ»:

Կը խոտոտվանիմ Քեզի Տէր, որքան որ յիշողութիւնս ինծի կը ներկայացնէ, — յիշատակ մը որ քանիցս կրկնուած է — թէ մօրս արձակած այս խօսքը իմ ուշս գրաւեց: Մայրս որ արթուն կը հսկէր Քու պատգամիդ վրայ առանց խոտվելու ճշմարտակերպ թարգմանութեանս սուտովը, անմիջապէս տեսաւ ինչ որ պէտք էր տեսնել, ինչ որ անտարակոյս ես չէի տեսած իր պատասխանէն առաջ: Այո՛, երազէն աւելի այս խօսքին ապշեցայ որ այնքան յապաղած ապագայ ուրախութեանց գուշակութիւնն եւ իր ներկայ տրբամութեանց մխիթարութիւնն էր(1):

Քանզի տակաւին ինք տարիներ եւս անցան երբ տապալտկելով անդունդին տիղմին ու ստութեան խաւարին մէջ, զիս վերցնելու յաճախակի ջանքն եւ անողորմ անկումներէն յետոյ հետզհետէ աւելի վար կը սուզէի: Սակայն եւ այնպէս այս որքնայրին՝ պարկեշտ, բարեպաշտ եւ զգաստ ճիշդ Քու սիրածիդ պէս, միշտ աւելի յուսալից, բայց ո՛չ նուազ յարատեւ լալու եւ հեծելու մէջ, չէր տատանէր իր աղօթքի պահերուն ինձ համար Քու ներկայութեանը բարձրացնել իր հառաչներուն ձայնը: Եւ իր աղօթքներուն ձայնը մինչեւ Քեզի կը թափանցէին: Եւ Դուռն միշտ

(1) Ահա հրահանգից օրինակ մը բոլոր այն ծնողներուն ինչպէս նաեւ հոգեւոր դաստիարակներուն եւ բոլոր անոնց համար որոնք անդարձ զաւակի մը կամ հոգիի մը բնութիւնը ճշտուած են: Աստուած չլքեր զեղաւորը: Իրեն բարձրացուած աղօթքներն ու աղաքանքները ու՛ իր առջեւ թափուած աղցունքներն ու հառաչները ի զուր չե՛նքնաւ: Աղօթքի պատասխանը կրնայ ուշանալ, երկա՛ր ուշանալ, բայց չկրնար ձախողիլ եթէ հաւատքի եւ սիրոյ աղօթքն է: Յաճախ յուսահատող եւ երկար սպասումէն յոգնած աղօթողներուն մենք ալ կը հարցնենք Թէ «Մի՞թէ Աստուած անիրա՞ւ է որ մոռնայ մեղաւորին համար թափուած արցունքները»: Տէրը բոլորիս Օգոստինոսի մօրը «Մօնիքայի» սէրը, հաւատքը եւ յարատեւութիւնը տայ, մինչեւ որ հաւատալէ ետքը Աստուծոյ փառքը տեսնենք մեզ ծանրաբեռնող հոգիներուն նորոգուած կեանքներուն վրայ:

Զ. Բ. Պ.

թոյլ կուտայիր որ ես գլորէի ու մխրճուէի գի-
շերուան մէջ:

ԳԼՈՒԽ 12

Եպիսկոպոսի մը մարգարէական խօսքը

Բայց Դուռն ուրիշ պատգամ մ'ալ արձակեցիր
զոր կը յիշեմ: Բաներ կան զորս մոռցած եմ, ու-
րիշներ՝ որոնց վրայէն լուռ կ'անցնիմ, վազելով
անոնց որոնք կ'ստիպեն զիս վկայելու Քեզի հա-
մար: Այս պատգամը Դուռն տուի Քու ծառայիդ,
եկեղեցիին մէջ սնած եւ Քու Դրքիդ գործածու-
թեանը մէջ վարժուած եպիսկոպոսի մը բերնով:
Մայրս օր մը կ'աղաչէր անոր որ հաճի տեսնու-
իլ հետս հերքելու իմ սխալներս, մոռցնելու չա-
րը եւ սորվեցնելու բարին, (այսպէս կ'աղաչէր
իր բոլոր կարող սեպած անձնաւորութիւններուն)
սակայն նա, խոհեմաբար ետ քաշուեցաւ — ինչ

.....

(2) Օգոստինոս իր երկտասարդութեան, տասնեակ մը
տարիներ Մանիքեաց աղանդին յարած էր: Մանէս՝ ու-
րուն մասին մեր ունեցած տեղեկութիւնները ընդհան-
րապէս անվստահելի եւ հսկասական առասպելներու վրայ
հիմնուած են, եղած է բարձր ծագումով պարսիկ մը եւ հիմ-
նադրը այս աղանդին: Իր 30-րդ տարիքին Պարսկաստան
երեսան կ'ըլլէ իբր կրօնքի ներշնչեալ վարդապետ եւ կ'ու-
սուցանէ գաղափարներ որոնց հիմը աւելի սեմական
կամ բարեխաղանքան թէ Զօրաստրի կրօնքէն, թէ եւ պարս-
կական յատկանշական հաւատալիքներ որոշ տեղ բռնած
են իր սիստեմին մէջ: Շատ մը գրքեր գրած է որոնց բո-
լորն ալ կորսուած են: 276 թուականին սպաննուած է Պար-
սիկ կառավարութեան կողմէ: Մանիքեցիք խստօրէն ճգ-
նաւորական են որոնց կարգ մը տեսակէտները Պոտոտա-
յական ծագում ցոյց տալ կը թուին: Աղանդը լատ. կազմա-
կերպուած էր. գլուխը 12 առաքեալներով: Իր նախնական
ձեւին մէջ, այնքան քիչ է քրիստոնէական տարրը որ բա-
ւական կրնայ նմանիլ Մուհամէտի հաւատքին: Մանէս կ'ը-
սէր որ իւրքն է խոստացուած «Միւսիմարիքը»: Աղանդը տա-
րածուած էր Արեւելի մէջ եւ բազմաթիւ հետեւորդներ ու-
նէր Հռովմէական պետութեան մէջ: Հալածուած են Դիոկ-
ղետիանոսի եւ անոր յաջորդող քրիստոնէայ կայսրերու կող-
մէն: Այս վարդապետութեան գլխաւոր գիծերը, այս կամ
այն ձեւին տակ տեսնուած են մինչեւ 13-րդ դարը զանա-
կան աղանդներու մէջ:

Օգոստինոս իր խոստովանութիւններուն մէջ, իր մոլո-
րութեան համար խորին զղջում յայտնելէ յետոյ, ուժգին
յայտարարութիւններով եւ ջախջախիչ փաստերով կը հար-
ուածէ Մանիքեաց սխալները, դատաւարտելով շատ մը
վտանգաւոր եւ շլացուցիչ վարդապետութիւններ, որոնք
Աստուծոյ փառքին եւ Անոր ճշմարտութեան դէմ ու վրկու-
թեան վնասակար կը գտնէ:

Զ. Բ. Պ.

որ վերջէն գնահատեցի ես — պատասխանելով
թէ դեռ ես ըմբոստ էի, լեցուած ըլլալով այս հե-
րետիկոսութեանը նորութիւններովը (2) եւ այն
վէճերուն յաջողութիւններովը որոնցմով մի քա-
նի տղէտներ շփոթեցուցած էի:

— «Թողո՛ւր, զայն, աւելցուցած էր, միայն ի-
րեն համար ազօթէ Տէրոջը, նա ինքնիրեն իր
ընթերցումներովը պիտի ճանչնայ իր հաւատքին
բոլոր սխալն ու անօրէնութիւնը»:

Ապա պատմեց թէ ինքն ալ իր մանկութենէն
Մանիքեցուց յանձնուած էր իր մօր կողմէ,
որ անոնցմէ հրապուրուած էր. թէ՛ ո՛չ թէ միայն
կարդացած, այլ իր ձեռքովն իսկ ընդօրինակած
էր անոնց բոլոր գործերը, եւ թէ առանց վէճի,
առանց փաստի ու պայքարի յանկարծ տեսած
էր թէ այս աղանդէն որքան խուսափիլ պէտք
էր եւ փախած էր:

Մինչ մայրս՝ հեռու այս խօսքերէն հաճողուե-
լէ նոր խնդրանքներով եւ արցունքներով կ'ստի-
պէր զայն որ զիս տեսնէ եւ հետս վիճի,

— «Գնա՛, կ'ըսէ իրեն քիչ մը անհամբերու-
թեամբ, թողո՛ւր զիս եւ միշտ այսպէս ըրէ: Ան-
կարելի է որ այսպիսի արցունքներու զաւակը
կորուսի»:

Մայրս մեր տեսակցութեանց միջոցին յա-
ճախ կը յիշէր թէ ինք այս պատասխանը իբր
երկինքէն եղած ձայն մը ընդունած էր:

Բաղուածաբար

Զ. Բ. ՊՈՒՏԱՐԵԱՆ

Փարիզ

ԿԵՆԱՅ ԱՄՈՒՆԵՐԷՆ

ՄԱԷԼ ՍԹՐՈՄ

Նորվեգիոյ սառուցեալ եզերքներուն մօտ, Լօ-
ֆօստէն կոչուած կղզիներուն քով, հսկայական
յորձանուտ մը կը գտնուի, հնարկու վրէ՛ մը
Մաէլսթրօմն է ան:

Այս յորձանուտը կազմուած է նմանը չտես-
նուած կատաղի հոսանքով մը, որ ծնունդ կ'առ-
նէ բազմաթիւ կղզիներու միջեւ, մակնթացու-
թեան պահուն, եւ որ իրեն կը քաշէ նոյնիսկ
շատ հեռուններէն, իր հասողութեան մէջ գտնուող
ամէն բան:

Տարօրինակ բան մը. յորձանքը ամենէն ա-

ւելի հզօր կ'ըլլայ այն ատեն երբ օդը կատարելապէս զեղեցիկ եւ խաղաղ է:

Նաւաստիները կը ճանչնան այս վտանգաւոր հոսանքը եւ շատ կը զգուշանան:

Սակայն, նոյնիսկ մեր օրերուն մէջ, կը պատահի որ իրենց ճամբան կորսնցուցած նաւեր կամաց կամաց այս վիճին կը մօտենան, առանց կասկածելու իրենց սպառնացող վտանգի մասին: Անոնք քիչ քիչ կը շեղին իրենց շիտակ ճամբէն եւ անզգալիօրէն կը հետեւին այն հոսանքին որ զիրենք գէպի կորուստ կը քշէ:

Անոնք նախ խոշոր շրջանակ մը կը գծեն,

ԱՆՀԱՒԱՏԸ

○○○○○ — ○○○○○

Անդգամը իր սրտին մէջ ըստ թէ. Աստուած չկայ
Սաղ. ԺԴ. 1

Իրենք իմաստուն ենք ըսելով յիմարեցան...
Հռով. Ա. 22

Յիմարութիւն... քանի՜ քանի անգամներ,
Օր ցորեկով եւ թէ երկար գիշերներ
Փորձեց պարպել ովկէանոսները բոլոր՝
Իր խիստ փոքրիկ բաժակին մէջ հունաւոր...

Քանի՜ անգամ փորձեց իր խեղճ թեւերուն
Վըրայ կրել իր երկրին հետ՝ աստղերուն
Գունդերը հուր, գունդերն անհուն, անհամար,
Ու դեռ լուծել անոնց գաղտնիքը խաւա՛ր...

Եւ ունեցաւ աւելի խօլ երազներ,
— Փոխան սրտի բացաւ զլուխն իր աւեր,
Եւ ուզեց հոն սեղմել Աստուածն անպարփակ:

Ու երբ տեսաւ որ զազիր «ես» իր յիմար
Կը տուայտի, զի արարած մ'է անկար,
Յայնժամ գոչեց, Դիպուածն է մայր աշխարհի:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Հա Սիօթա



բայց այս շրջանակը հետզհետէ կը պզտիկնայ, կը սեղմուի եւ կը մօտենայ Մաէլսթրօմի քաշողութեան կեդրոնին:

— «Նաւապետ», պօռաց օրին մէկը ծեր նաւաստի մը երիտասարդ պաշտօնատարի մը, որ առաջին անգամ այդ եզերքներէն կ'անցնէր, «պէտք է որ անմիջապէս խարխախ նետենք: Հսկը ինկած է, ու կէս ժամէ ի վեր նաւը քառորդ շրջանակ մը գծած է»:

— Մի վախնար, պատասխանեց այս վերջինը, նաւը զօրաւոր է, կրնայ դիմանալ:

Բոլորովին մոտատանջ, նաւուղիդը իր կողմնացոյցին դիմեց, եւ վայրկեան մը վերջ վերադարձաւ սարսափէն տժգունած:

— Նաւապետ, աղաղակեց, Աստուծոյ սիրոյն, խարխախ նետել տուէք մինչեւ որ հովը ելլէ, Մաէլսթրօմի հոսանքներն մէջ կը գտնուինք: Տեսէք հոն այն նաւը որ անշարժ է եւ վտանգի ազդանշանը կը զրկէ մեզի:

— Օ՛հ, հանդարտ եղիր սիրելիս, մի վախնար, ըսաւ նաւապետը:

Ու կողմնացոյցը միշտ ու աւելի որոշապէս կը ցոցնէր որ գեղեցիկ նաւը բռնուած է խորհրդաւոր ու ճակատագրական շրջանակին մէջ:

Յանկարծ աղաղակ մը բարձրացաւ, նաւաստիները ահսած էին վտանգը եւ կ'ուզէին անկէ խուսափիլ:

Բոլոր առաքաստները բացուեցան, շողին սկըսաւ խուլ դղրդիւն մը հասել. նաւապետը, նաւաստիները եւ նոյնիսկ ճամբորդները լծուեցան գործի, արգիլելու համար մօտալուտ ահաւոր աղէտը: Անօգնէտ ջանք, շատ ուշ էր...

Մաէլսթրօմը դանդաղօրէն, բայց վստահօրէն իր գործը կը շարունակէր:

Կը տեսնէ՞ք հիմա գեղեցիկ նաւը. ան կը դառնայ ու կը դառնայ զարհուրելի արագութեամբ հոսանքին հզօր ձգողականութեան տակ:

Վերջին անյոյս ճիչ մը կը բարձրանայ դժբաղդներուն կուրծքէն, յետոյ չարաշուք շառաչիւն մը, մի քանի ճարճատումներ, եւ քանի մը խլեակներ ջուրին երեսը եւ ամէն բան վերջացած է: Անդունդը կուլ տուած է զանոնք:

Աշխարհի հոսանքէն բռնուած եւ մեղքի շրջանակին մէջ սեղմուած իւրաքանչիւր անհատի ոտքերուն տակ անդունդ մը կը սպասէ ուր նա վերջապէս պիտի քշուի անխուսափելիօրէն:

Գեղեցիկ նաւը կորսուեցաւ երբ որ օդը շատ պայծառ էր: Ո՛վ մեղաւոր, դուն ալ կրնաս կորսուիլ յաջողութեամբ, հաճոյքներով եւ դիւրին կեանքով շրջապատուած ժամանակին:

Մատենադարանի մէջ խորասուզողներէն ոչ մէկը վերադարձած է որպէսզի աւոր վիճին խորութիւնը մեզի նկարագրէ: Մեզքի հոսանքէն տարուողներէն ալ ոեւէ մէկը ետ չէ եկած որպէսզի մեզի պատմէ այն դառն զղջումի անդունդները որոնց մէջ ընկղմած են առաջ անցնողները: Բայց երբ անգամ մը հոն իյնան, այլեւս զղջալը շատ ուշ է:

Ուրեմն կանգ առ, քանի դեռ ժամանակ կայ. ինչո՞ւ մեռնիս, երբ կրնաս ապրի՛լ. ապրիլ ապահով, չարէն հեռու, Աստուծոյ հետ, ապրիլ և մեռնիլ խաղաղութեամբ՝ ապրելու համար յաւիտեանս:

Լաւ Բարեկամ մը ունինք, Արարիչ մը, որ կ'ուզէ քեզ փրկել հիմա: Ան կ'ուզէ քեզ հեռացնել վտանգաւոր հոսանքէն: Իրեն գնա, անցուցած թշուառ կեանքիդ յուսախաբութիւններն ու դառնութիւնները կը ջնջէ Անիկա ու փնտռած խաղաղութիւնդ կուտայ քեզի:

Իրեն դիմէ ինչպէս որ ես, Ան քեզ պիտի ընդունի եւ պիտի փրկէ:

Թարգ. Յ. ՔԻՒՐԲՃԵԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ԱԿՆԱՐԿԸ ԱՌ ՊԵՏՐՈՍ



Խաւար է պատած համայն բնութիւն,
Զաղիր Բանասիրուն տօնէ յաղթութիւն,
Աստուծոյ Գառը անրիծ, անարատ,
Արդ դատապարտուի որպէս մահապարտ:
Բարին է պարտուած, չարը յաղթական,
Ահա աշխարհի արդար դատաւարան:

Անձնուէր Հովիւն է արդ զարնուած,
Եւ փոքրիկ հօտը ցիրուցան եղած.
Մէկը դաւաճան, անարգ սեւ գործիք,
Միւսն ուխտադրուծ՝ դարձած դասաւիթ,
Ամէնքն ալ հոս հոն ցրուած ահաբեկ,
Լքած են զԱնի մինա՛կ վըշտաբե՛կ:

Խաւար է գիշեր, ցուրտ է եղանակ,
Գաւթի ձիւնները կը վառի կրակ,
Յովնանի որդին սաստիկ դալկացած՝
Կեցած հոն տաքնայ տխուր ու յոգնած.
Տաքցող խումբին մէջ առանձին կ'զգայ,
Վըշտի բեռին տակ սիրտը կը հեւա՛յ:

Դռնապան աղջիկ արձակ համարձակ
Անձանօթ մարդուն նայելով շիտակ,

Հարց ուղղէ անոր խիստ հետաքրքիր,
«Դուն ալ Յիսուսի աշակերտ չէի՞ր»:
Բայց նա ուրանայ աշակերտութիւն,
Վախնայ յայտնելու պարզ ճշմարտութիւն:

Անձանօթի դէմքն, խօսուածքն ու բառեր
Իրեն զրաւեն սեւեռուն աչքեր,
Ուրիշներ դարձեալ աղախին ծառայ
Իրար ետեւէն ձայնով աներկբայ,
Ահաբեկ մարդուն ուղղեն նոյն հարցեր,
«Դուն ալ Յիսուսի աշակերտ չէի՞ր»:

Սիմոն Յովնանեան սաստիկ զարհուրած՝
Ստէ, ուրանայ իր Տէրը զթած,
Մինչ մերձակայքէն կանչէ աքաղաղ
Խզէ լուծիւն խուլ, միապաղաղ,
Թէեւ աւետուի այգուն մօտենալ:
Տխուր գիշերը յաժառի մընալ:

Ճիշդ նոյն ընկերն Փրկիչը ձեռուած,
Տօգոյն երեսով սաստիկ պարտաւած,
Մինչ ապարանքէն նենդ կայիափայի
Տարուի դէպ պալաան կեղծ Պիղատոսի,
Ակնարկ մը ձգէ Պետրոսի վրայ,
Ակնարկ մը վսեմ, խոր սիրոյ վկայ:

Սիրոյ եւ վշտի սոյն վսեմ ակնարկ
Եւ աքաղաղի կանչն կանխագուշակ,
Երկուք միասին ցնցեն զինք ուժգին
Եւ ալեկոծեն բովանդակ հոգին.
Հոն երկար մնալ ալ չկրնալով
Իսկոյն դուրս կ'ելլէ դողդոջ քայլերով:

Խաւար է դուրսը, սեւով պատանքուած:
Բանդի կատարուի ոճիր մ'չլսուած,
Տխուր երեւին նոյնպէս վառ աստղեր,
Լաւ չեն փալփլիր անոնց լոյս դէմքեր.
Արծաթ լուսինն ալ ահա պահուրտի,
Սեւ ամպի մը տակ մտած կձկուի:

Սակայն բնութեան վեհ տեսարաններ
Պետրոսի միտքը երբեք չեն զրաւեր:
Իր աչաց առջեւ շարունակ կուգայ
Որպէս անսահման մէկ սիրոյ վկայ,
Իր Վարդապետի այն վսեմ ակնարկ
Որ շանթահարեց իր հոգին համակ:


Վայրկեանի մը մէջ որպէս սինեմայ,
Իրար յաջորդեն կամայ ահամայ
Իր անցեալ կեանքի բոլոր մեծ դէպքեր,
Քաղցր, նուիրական այն յիշատակներ

Որ այնքան ուժգին զինքը կապեցին
Այն հիանալի սուրբ Վարդապետին:

Եւ ահա իսկոյն իր գոյգ աչքերէն
Արտասուաց շիթեր հոսին մեղմօրէն,
Ապաշխարութեան անկեղծ զղջումի,
Սոյն բիւրեղ շիթեր նշան խոր վըշտի,
Վերահաստատեն «Վէ՛մ»ը գլորեալ,
Եւ վերականգնեն ինկած առաքեալ:
(Վեր.) Մ. ՏէՐ ՍԱՀԱԿԵԱՆ

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԹՈՎՄԱՍ ԱՌԱՔԵԱԼ



Ծննդավայրը անծանօթ է, բայց մեծ հաւանութեամբ Գալիլիացի է: Ինչպէս իր անուան նշանակութենէն կը հասկցուի, մին է երկուսրեակի մը:

Կրնանք թոժմասը նկատել մին Յիսուսի ամենէն անձնուէր առաքեալներէն: Երբ Երուսաղէմի մէջ թշնամութիւնը Անոր դէմ իր ծայրագոյն աստիճանին բարձրացած էր եւ հրեաներ զԱյն կը փնտռէին քարկոծելու համար, եւ երբ Յիսուս՝ հակառակ իրեն սպառնացող այդ լուրջ վտանգներուն՝ որոշեց Երուսաղէմ ելլել, թոժմաս էր որ ըսաւ իր աշակերտակիցներուն, «Մենք ալ երթանք որպէսզի Անոր հետ մեռնինք» (Յովհ. ԺԲ. 1-6): Առանց Յիսուսի՝ կեանքը այլեւս նշանակութիւն չունէր անոր համար: Ուստի իբր Անոր հաւատարիմ բարեկամը կ'ուզէր չարչարակից ըլլալ Անոր:

Գոժելի է նաեւ թոժմասի անկեղծութիւնը: Թաքուն բան մը չունի. կ'ըսէ անվերապահօրէն ինչ որ կը խորհի: Խաչելութեան նախընթաց զիշերն էր, Յիսուս իր աշակերտները կը մխիթարէր՝ անոնց ուշադրութիւնը յաւիտենական ու երջանիկ բնակարաններու վրայ հրաւիրելով եւ ապա կ'աւելցնէր, «Եթէ երթամ ու ձեզի տեղ պատրաստեմ, նորէն կուգամ ու ձեզ իմ քովս կ'առնեմ, որպէսզի ուր ես եմ, դուք ալ հոն ըլլաք, եւ ուր ես կ'երթամ, գիտէք եւ ճամբան ալ գիտէք»: Հաւանաբար բոլոր առաքեալներն ալ շատ քիչ մխիթարուեցան Անոր այդ խօսքերովը: Բոլորն ալ տխուր կը գտնէին իրենց ապագան եւ մութ իրենց երթալիք ճամբան եւ բոլորն ալ կը խորհէին թէ Քրիստոսի մահը ա-

մէն բանի վերջակէտ պիտի դնէր: Բայց միայն թոժմաս էր որ չծածկեց իր եւ իր աշակերտակիցներուն հոգեկան տխուր վիճակը, բաց կերպով արտայայտեց ինչ որ կ'աւելոծէր իրենց բոլորին ալ սիրտը, ըսելով, «Տէ՛ր, չենք գիտեր ո՛ւր կ'երթաս. եւ ինչպէ՛ս կրնանք ճամբան գիտնալ»: Եւ թոժմասի այդ անսեթեւեթ, անկեղծ արտայայտութեան կը պարտինք Յիսուսի ամենէն վըսեմ, ամենէն աստուածային խօսքերէն մին, — «Ես եմ ճամբան, ճամբարութիւնը եւ կեանքը, մէկը Հօրը քով չգար, եթէ ոչ Ինձմով» (Յովհ. ԺԴ. 1-6): Եւ քանի՜ քանիսն էր, խաւարէն լոյսի չէ առաջնորդած մեր Տէրոջ այս խօսքը:

Թոժմասի անկեղծութեան կը պարտինք դեռ ատկէ ալ փառաւոր բան մը, քանի որ անիկա անմիջապէս չհաւատաց միւս առաքեալներուն վկայութեանը եւ անկեղծօրէն յայտնեց իր կասկածը եւ թերահաւատութիւնը, մեր Տէրը առաքեալներու եւ անոնց միջոցաւ մեզի շնորհեց իր ամենէն շօշափելի յայտնութիւնը: Թոժմաս կըրցաւ իր մատերովը շօշափել Յարուցեալին ձեռքերը, իր ձեռքը Անոր կողմ խոթել ու իր հաւատքը հիմնել ամենէն դրական իրականութեանը վրայ (Յովհ. Ի. 24-29):

Թէեւ Յիսուս իրաւունք ունէր յանդիմանաբար թոժմասի ըսելու, «Մի ըլլար անհաւատ, հապա հաւատացեալ... Որովհետեւ դուն զիս տեսար՝ հաւատացիր, երանի՜ անոնց որ տեսած չեն ու կը հաւատան»: Թէեւ աւելի երանի եւ մեր սրտին աւելի մօտիկ է Յովհաննէս առաքեալ, որ յարութեան իրականութեանը հաւատաց՝ առանց Յարուցեալը տեսած ըլլալու, — միայն Անոր զերեզմանը պարապ՝ եւ Անոր զխաւս վրայի վարձմակը ծալլուած գտնելուն համար, այսուհանդերձ թոժմասի անկեղծ թերահաւատութեան հանդէպ Քրիստոսի բռնած զիրքը մեծ օրհնութիւն եղած է բոլոր անոնց, որոնց համար — իրենց բնական խառնուածքին բերումով — հաւատքը զիրին գործ մը չէ, հապա արդիւնք՝ դառն մարտնչումներու: Այդպիսիները կրնան տեսնել թէ առաքեալները աչքի երեւոյթէ խաբուող մարդիկ չէին, հապա անոնց մէջ կային այնպիսի դժբաղատ անհատներ, որոնք իրենց ամենէն արժանահաւատ բարեկամներու վկայութեան իսկ չվստահեցան: Միայն այն ատեն հաւատացին իրենց Տէրոջը յարութեանը, երբ իրենք ալ անձամբ տեսան եւ շօշափեցին Յարուցեալը:

Ուստի որչա՛փ երախտապէտ ըլլալու ենք թոժմասի, որ իր անկեղծ տարակոյսներով առիթ տուաւ մեր Փրկչին՝ տալու մեզի իր յարութեան

ամենէն ապահով եւ ստոյգ ապացոյցներէն մին: Քրիստոսի յարութեան համոզուելէ ետքը՝ թովմաս այլեւս Անոր հաւատարիմ ծառան էր եւ Ան էր իր «Տէրն ու Աստուածը»: Եկեղեցական աւանդութեան համաձայն՝ Անոր սէրէն մղուած՝ թովմաս գացած է մինչեւ Պարթեւաստան ու Հնդկաստան եւ հոն Աւետարանը քարոզած: Եւ հաւանականութեամբ ստոյգ է այդ աւանդութիւնը, քանզի մինչեւ այսօր ալ Հնդկաստանի մէջ կը գտնուին քրիստոնեաներ, որոնք ինքզինքնին «թովմասեան քրիստոնեաներ» կը կոչեն եւ զայն կ'ընդունին իբր հիմնադիր իրենց եկեղեցւոյն: Դարձեալ աւանդութիւնը կ'ըսէ մեզի թէ թովմաս մեռած եւ թաղուած է Եդեսիոյ (Ուրֆա) մէջ:

ՄԱՏԹԷՈՍ ԱՌԱՔԵԱԼ

— 00 —

Կը կոչուի նաեւ Ղեւի, եղբայրն է Յիսուսի տրիշ մէկ աշակերտին՝ Յակոբոս Ալբէոսեանի (բղդ. Մատթ. Ժ. 3, Մարկ. Բ. 14, Ղուկ. Ե. 27):

Յիսուսի աշակերտելէ առաջ առեւտրական կարեւոր կեդրոնի մը, Կափառնայումի մէջ մաքսաւոր էր: Պաշտօնեայ մը, որ գնած էր մաքս գանձելու իրաւունքը եւ զայն կը զործածէր իբր միշտ հարստանալու:

Ինչպէս բոլոր մաքսաւորները, հրեաները Մատթէոսն ալ կը նկատէին իբր այնպիսի մէկը, որ ընչաքաղցութենէ մղուած՝ ինքզինք ծախած էր հեթանոս իշխանութեան, — իր ժողովուրդը ճշնշողներուն — եւ կը ջանար հարստանալ ի ֆնաս իր ազգակիցներուն: Բնականաբար կ'ատէին ալ զինքը՝ իբր յափշտակող, ազգադաւ, աստուածուրաց եւ դժոխքի որդի. Մատթէոս գիտէր զայդ, ուստի ինքն ալ փոխադարձաբար կ'ատէր զանոնք եւ անոնցմէ իր վրէժը կ'առնէր՝ ալ աւելի լաւ կողոպտելով զանոնք:

Բայց եկաւ Յիսուս, եւ իր սուրբ կեանքովն ու անհուն սիրովը արթնցուց անոր քնացած խիղճը, փշրեց անոր մամոնապաշտ ու ատելավառ սիրտը եւ զգացուց անոր Աստուծոյ թագաւորութեան թանկագին մարգարիտին արժէքը, զոր ձեռք ձգելու համար Մատթէոս թողուց իր պաշտօնը, ոյժն ու զբամը, եւ հետեւեցաւ Քրիստոսի «ետեւէս եկուր» հրամանին: Քանզի ըմբռնեց որ Անիկա կրնայ զինքը, կորստած մաքսաւորն ալ, մեղքէն ու արհամարհանքէն ազատել եւ Աստուծոյ առաջնորդել:

Դժբաղդաբար Աւետարաններու եւ Գործք Առաքելոց մէջ կոչման պատմութենէն զատ ուրիշ բան մը զրուած չէ Մատթէոսի վրայ: Միայն աւանդութիւնը կը ցուցնէ թէ նա Պենտեկոստէն յետոյ Պաղեստինէն դուրս հեթանոսներուն գացած է եւ անոնց քարոզած Աւետարանը: Սակայն Մատթէոս իր քարոզներէն աւելի մեծ ծառայութիւն մը մատուցած է եկեղեցւոյն՝ գրելով Առաջին Աւետարանը: Հերապոլսեցի Փափիաս եպիսկոպոսը, որ 165ին վախճանած է, պատմած է թէ Մատթէոս գրած է Յիսուսի խօսքերը՝ երբայեցեքէն լեզուով: Մատթէոս յետոյ ինք անձամբ այդ խօսքերը յունարէնի թարգմանած է եւ անոնց վրայ աւելցուցած մեր Տէրոջ կեանքի ու գործերու պատմութիւնը: Ասով մենք ունեցած ենք այժմ մեր ձեռքը գտնուած Մատթէոսի Աւետարանը:

Գ. Գ. Խ.

ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ՏԵՐԸ ԿՈՒԳԱՅ

— 00 —

Յիսուս ըսաւ, «Գիրքերը քննեցէք... բուն անոնք քն որ Ինծի համար կը վկայեն» (Յովհ. Ե. 39):

«Ասոնք (Բերիացիք) թեաւողոնիկէի մէջ եղողներէն աւելի ազնիւ մարդիկ էին... ամէն օր Գիրքերը կը քննէին թէ այս բաները այսպէս են» (Գործ. ԺԷ. 11):

Մեր Տէրոջը զալստեան օրը եւ թուականը որոշուած չէ, սակայն այնքան յստակ նշաններ եւ որոշ մարգարէութիւններ տրուած են որ երբ նշանները կը տեսնենք եւ մարգարէութիւնները կը կատարուին, հաստատ կրնանք ըսել թէ Անոր զալստեան օրերը հասած են:

Աշակերտները մօտեցան Յիսուսի առանձինն եւ որոշ հարցում մը ըրին:

«Քու զալուստիդ եւ աշխարհի (էյօն) վերջին նշանը ի՞նչ պիտի ըլլայ»: Մենք եւս նոյն հարցումով եւ աղօթքով ու երկիւղածութեամբ մօտենանք Տէրոջը մեր առանձնութեան մէջ, քննելով Աստուծոյ խօսքը, սերտելով այս մասին եղած մարգարէութիւնները որոնք կատարուել են կամ պիտի կատարուին, գիտելով նշանները եւ սպասելով այն երջանիկ յոյսին: Տիտ. Բ. 13:

ԱՇԽԱՐՀԻ ՎԻՃԱԿԸ

Ա. Աշխարհի նկարագիրը: «Վերջին օրերը Հարժամանակներ պիտի գան, վասնզի մարդիկ պիտի ըլլան անձնասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ, ծնողներու անհնազանդ, ապերախտ, անսուբ, անհաշտ, բանասարկու, անժողկալ, դաժանաբարոյ, բարին չը սիրող, մատնիչ, յանդուգն, գոռոզ, աւելի հեշտասէր քան թէ աստուածասէր» Բ. Տիմ. Գ. 1-4:

Այսօրուան բարոյական աշխարհը նկարագրող ի՛նչ սքանչելի մարգարէութիւն: Միայն այս երկրին մէջ հարիւրաւոր բարձրաստիճան պաշտօնեաներ, նոյնիսկ երեսփոխաններ ստեղծեամբ եւ խորհրդակցութեամբ դատապարտուած բանաւորու մէջ են: Օրուան լուրերը բաւական են հաստատելու այս ճշմարտութիւնը:

Բ. Հաւատքի վիճակը: «Վերջին օրերը ծաղր ընողներ պիտի գան, որոնք իրենց ցանկութիւններուն համեմատ պիտի քալեն եւ պիտի ըսեն, ո՛ր է Անոր գալուն խոստմունքը, վասնզի քանի որ հարիւր քնացան, ամէն բան այնպէս կայ կը մնայ արարածներուն սկիզբէն հետէ» (Բ. Պետ. Գ. 3-4):

«Բայց Որդին մարդոյ երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ» (Ղուկ. ԺԸ. 8):

Այս մարգարէութեանց կատարումը կը տեսնենք: Շատ բեմերէն Քրիստոսի երկրորդ գալստեան վարդապետութիւնը կը մերժուի եւ նոյնիսկ կը ծաղրուի, հաւատք մնացած չէ, մարդիկ երթալով անտարբեր եւ անզգայ կ'ըլլան Աստուծոյ եւ Իր սուրբ խօսքին հանդէպ:

Գ. Քաղաքական աշխարհը: «Պիտի լսէք պատերազմներ ու պատերազմներու լուրեր... ազգ ազգի վրայ պիտի ելլէ ու թագաւորութիւն թագաւորութեան վրայ» (Մատթ. ԻԴ. 6-7):

Այս 20 տարուայ ընթացքին չէ եղած օր մը որ խաղաղութիւն ըլլայ. աշխարհ այսօր պատերազմի լուրեր կը լսէ եւ նմանը չտեսնուած պատերազմի մը կը պատրաստուի. թէեւ խաղաղութեան ջանքեր կ'ընեն, սակայն կորուստը յանկարծակի պիտի գայ. Ա. Թեո. Ե. 3:

Դ. Տնտեսական աշխարհը: «Մարդոց սրտերը պիտի նուաղին իրենց վախէն եւ աշխարհի վրայ զալու բաներուն սպասելէն» (Ղուկ. ԻԱ. 26): «Սովեր» (Ղուկ. ԻԱ. 11: Մատթ. ԻԴ. 7, 24): Այսօրուան սովը աննման սով մըն է եւ աննախընթաց: Միլիոններ այսօր օրուան հացի կարօտ՝ կառավարութեանց նպաստով կ'ապրին եւ այսօր բազմութիւններ կը տապնապին: Երկրաշարժներ իրարու կը յաջորդեն եւ սարսափելի արկածներ

հազարաւորներ մահուան կը մատնեն:

Ե. Ընկերային աշխարհը: «Ծովը ու ալիքները պիտի գոռան» (Ղուկ. ԻԱ. 25): Դասակարգային պայքար, ընկերային խլրտումներ եւ կուսակցական կոիւններ երթալով կը սաստկանան, իրարու դէմ գաւելով եւ մահափորձերով:

Զ. Եկեղեցիին վիճակը: Գաղջ եւ սիրոյ մէջ պակաս. հակառակ այսքան ժողովներու շատ ըլլալուն, հոգեւոր հրատակութեանց եւ զօրաւոր լոյսի, գաղջ կեանք մը կ'ապրուի, անպտուղ վրկայութիւններ, ծանծաղ կեանք, պարզեաներ զրեթէ չկան, զոհողութիւն եւ նուիրում պակաս է Յայտ. Գ. 15, 16: Ա. Յովհ. Գ. 18:

Է. Հաւատարմութեան պակասը: «Եզրայր եղբայր մահուան պիտի մատնէ, հայրը՝ որդին եւ որդիներ իրենց ծնողներուն վրայ պիտի ելլեն ու մեռցնեն զանոնք» Մատթ. Ժ. 21): «Այն ատեն շատերը պիտի գայթակղին եւ մէկգմէկ պիտի մատնեն եւ մէկգմէկ պիտի ատեն... անօրէնութեան շատնալուն համար շատերուն սէրը պիտի պաղի» (Մատթ. ԻԴ. 10, 12): Այսօր որքան ճիշդ է ասիկա նոյնիսկ հաւատացեալներու համար: Հոգեւոր զաւակ մը, եկեղեցիէն կշտացող, ջուր առնող եւ ամէն կերպ հոգեւոր օրհնութիւններ վայելող, քիչ վերջը իր հոգեւոր ծնողը Սատանայէն կը կոչէ ու մահուան կը մատնէ. որքան հոգեւոր խմբակցութիւններ իրենց եղբայրները ոչ հոգեւոր կամ Սատանայէն է կոչելով կը դատապարտեն եւ անով ալ կը պարծենան: Աստուծոյ խօսքին հակառակ գործեր կը շատնան եկեղեցիին մէջ եւ շատեր սէրէ կը պաղին: Իսկ կարգ մը երկիրներու մէջ վերի համարը տառապէս կը կատարուի:

Ը. Գիտութիւնը կը շատնայ: Դան. ԺԲ. 4ին համեմատ թէ՛ աշխարհի գիտութիւնը եւ թէ՛ Ս. Գրքի գիտութիւնը շատցած է: Ներկայիս գիտութիւնը զարմանալի բաներ կ'ընէ եւ կը ցուցադրէ եւ մարդիկ զարմացմամբ կը դիտեն հնարուած սքանչելի բաները եւ կ'ապշին իմաստուն մարդոց զարմանալի յայտնութիւններուն առջև: Ցաւալի է որ շատեր սուտանուն գիտութեան ըսքանչելիքներէն յափշտակուած՝ մոռցած են Ստեղծիչը եւ գերազանց գիտութիւնը Փիլ. Գ. 8:

Թ. Հրեայ ազգին վիճակը: Աստուծոյ պատգամին համեմատ անոնք երթալով կը տեղաւորուին Պաղեստին. կը զարգացնեն զայն. այսօր անոնց թիւը Պաղեստինի մէջ նախապատերազմեան թիւը գրեթէ տասնապատիկն է: Հայֆա որ անըւին գրեթէ տասնապատիկն է: Հայֆա որ անըւան նաւահանգիստ մըն էր, այսօր գրեթէ Մարսէյլի հաւասար մեծ նաւահանգիստի մը վերած-

ուած է. մինակ իրենց պիւտճէն էր որ անցեալ տարի առանց բաց ունենալու գոցուեցաւ: Եբրայեցեանքն վերակենդանացաւ եւ ժողովրդային լեզու մը կը դառնայ: Ինչպէ՛ս զարմանալիօրէն կը կատարուին գրուածները եւ երկիր կը պատրաստուի: Հոգ. ԺԱ. 25-29: Մատթ. ԻԴ. 32-33:

Թղենին կը բողբոջի. ուստի մեզի ինչպիսի մարդիկ ըլլալ կը վայելէ (Բ. Պետ. Գ. 14) որ Ան մեզ անբիծ ու անարատ գտնէ խաղաղութիւնով եւ մենք կրնանք սրտանց աղօլ ել,

— Ամէն, եկուր, Տէր Յիսուս:

Ա. Օ. Փ.

ՍԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՅՈՒՆԻՍ 2.—

ՄԵՐ ՊԱՇՏՈՒՄՈՒՆՔԻՆ ՕՐԸ

Դաս Սաղ. Զ. 1-5: Մատ. ԺԲ. 1-8 Յովհ. Ի. 19:

Կարգալ Սաղ. ՂԲ. 1-5, 12, 13: Գործ. Ի. 7:

Շաբաթին առաջին յիշատակութիւնը Ս. Գրքին մէջ երկու բան կ'ենթադրէ:

1. Վեց օրերու բոլոր գործերէն հանգիստ Ծնդ. Բ. 2:

2. Օրհնութիւն եւ սրբութիւն Ծննդ. Բ. 3:

Ասկէ 2500 տարիներ յետոյ երբ Աստուած շաբաթը տասնարանեային մէջ մտցուց՝ հրամանը նոյն երկու բաները կ'ենթադրէ,

1. Հանգստութեան օրը միտքդ բեր Ելից. Ի. 8

2. Ձանիկա սուրբ պահելու համար Ելից. Ի. 8

Տէր Յիսուս Շաբաթ օրը գերեզմանին մէջ մնաց, ու քանի որ մենք մեռած Քրիստոս մը չէ, հապա յարուցեալ Քրիստոս մը կը պաշտենք, չենք կրնար ուրեմն մեր շաբաթական պաշտամունքը Յիսուսի գերեզման պառկած օրը կատարել, հապա զայն կը կատարենք Անոր յարութիւն առած, այսինքն Մէկշաբթի կամ Կիրակի կոչուած օրը:

Ասկէ զատ.—

1. Յարութիւն առնելէն յետոյ Յիսուսի Իր աշակերտներուն առաջին հինգ երեւումներն ալ կիրակի եղան Յովհ. Ի. 1-24: Ղուկ. ԻԴ. 13-31, 34:

2. Ս. Հոգին կիրակի օրը տրուեցաւ եւ Աւետարանը առաջին անգամ կիրակի օրը քարոզուեցաւ (Գործ. Բ.):

3. Առաքեալները կիրակին կը պահէին (Գործ. Ի. 7: Ա. Կոր. ԺԶ. 1, 2):

4. Եկեղեցական պատմութիւնը կը հաստատէ թէ նախնական եկեղեցին կիրակին կը պահէր: «Ուստի ալ մէկը Թող չդատէ ձեզ... շաբաթ. ներու կողմանէ» Կող. Բ. 16

Կիրակին պէտք է ըլլայ.—

Մարմնաւոր գործերէ հանգստեան օր մը Ծնդ. Բ. 1-3:

Գիտակից եւ հոգեւոր պաշտամունքի օր մը Յովհ. Դ. 22-24: Կող. Գ. 16:

Ողորմութեան օր մը Մատթ. ԺԲ. 7 (6-8):

Յաղթանակի օր մը Յովհ. Ի. 19-23:

Սորվեցնելու եւ սորվելու օր մը Գործ. Ի. 7-12:

Օրհնութեան օր մը Յայտ. Ա. 10-20:

Փառաբանութեան օր մը Սաղ. ՂԲ. Զ.

ՅՈՒՆԻՍ 9.—

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ (Պենտեկոստէ)

Դաս Յովհ. ԺԶ. 7-11: Հոգ. Ը. 10-17, 26, 27:

Կարգալ Յովհ. ԺԴ. 25-31:

Յովհ. ԺԵ. 26ի մէջ ամփոփուած սա խօսքին վրայ հիմնուելով թէ «Երբ Մխիթարիչը գայ... Անիկա Ինծի համար պիտի վկայէ», կարելի է հետեւեալ երեք կէտերով արտայայտել Ս. Հոգիին գործը:

1. Ստեղծագործութենէն առաջ Քրիստոսի աշխարհ գալը կը պատրաստէր:

2. Ստեղծագործութենէն յետոյ մինչեւ Մաղաքիայի վախճանը Քրիստոսի վրայօք մարգարէութեան վկայութիւնը կուտար (Յայտ. ԺԹ. 10: Բ. Պետ. Ա. 2):

3. Պենտեկոստէէն ի վեր Քրիստոսը կը փառաւորէ եւ Անոր երկրորդ գալուստը կը պատրաստէ (Բաղդ. Հոգ. Ը. 26 եւ Յայտ. ԻԲ. 17):

Հայրը փառաւորեց Որդին (Յովհ. ԺԷ. 1) եւ Սուրբ Հոգին կը փառաւորէ Որդին (Յովհ. ԺԶ. 14):

Յիսուս Սուրբ Հոգիէն ծնաւ Ղուկ. Ա. 35: Ս. Հոգիին միջոցով պատարագուեցաւ Եբր. Թ. 14 եւ Ս. Հոգիին միջոցով յարութիւն առաւ Հոգով. Ա. 4: Եփես. Ա. 19, 20:

Յովհ. ԺԶ. 7.11— Սուրբ Հոգին թէեւ աշխարհի Յանդիմանին է, բայց Յիսուսի աշակերտին ներսիդին բնակելով անոր Մխիթարիչը պիտի ըլլայ:

Հուով. Ը. 10.17, 26, 27— Մեր ներսիդին (մեր մարմինին մէջ) բնակողը մարմնով յարութիւն առած Քրիստոսի Հոգին է. ուստի հին մեղքի մարմինը մեռած պէտք է ըլլայ, որպէսզի Յա-

բուցեալ Քրիստոսի Հոգին մեր մէջ բնակի եւ մեր մեռած մարմինը կենդանացնէ արդարութեան համար:

Հօրմէն ելած Հոգին առնելու համար որդի ըլլալու ես:

Որդւոյ կեանքը ապրելու համար Հօրը Հոգիովը առաջնորդուելու ես. թէեւ այդ առաջնորդութիւնը երբեմն ալ բանէ մը արգիլուելով կ'ըլլայ (Գործ. ԺԶ. 6, 7):

Սուրբ Հոգին... Աստուած իրեն հնազանդ եւ զոյնեցուն տուաւ Գործ. Ե. 32:

ՅՈՒՆԻՍ 16.—

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԵՐ

Դաս Բ. Օրին. Ը. 11-18: Բ. Կոր. Թ. 6-8:

Տնտեսը ծառայ մըն է Մատթ. ԻԴ. 45, բայց իր Տէրոջը դերը կը կատարէ (Մատթ. ԻԴ. 45):

Տնտեսը պէտք է ըլլայ հաւատարիմ (նոյնիսկ քիչ բանի մէջ) Ղուկ. ԺԲ. 42: Իմաստուն Ղուկ. ԺԲ. 42: Բարի Մատթ. ԻԵ. 21:

Ամէն հաւատացեալ տնտես է Աստուծոյ իրեն յանձնած տաղանդին (քիչով կամ շատով «ամէն մէկուն իր կարողութեանը չափ» Մատթ. ԻԵ. 15):

Տնտեսը պէտք է յափշտակող դառնայ եւ Տէրոջը իրեն յանձնած ստացուածքին վրայ իբր իբր նայի (Բաղդ. Եղեկ. ԻԸ. 2, 17: Մատթ. ԻԱ. 38 եւ Փիլ. Բ. 6):

Տնտեսը պէտք է զգուշանայ՝

Ծուլութենէ Մատթ. ԻԵ. 26:

Չարութենէ Մատթ. ԻԵ. 26:

Անպիտան ըլլալէ Մատթ. ԻԵ. 30:

Կեղծաւորութենէ Մատթ. ԻԴ. 48, 54:

Բայց Աստուծոյ խօսքին մէջ հաւատացեալին տնտեսութիւնը նաեւ Աստուծոյ իրեն յանձնած դրամէն կամ ստացուածքէն հոգեւոր տուրք կամ տասանորդ եւ ուրիշ ընծաներ տալու տեսակէտէն ալ նկատի առնուած է.—

Տնտեսութիւնը հրամայուած Բ. Օրին. Ը. 11-20:

Տնտեսութիւնը թերացուած Մաղ. Գ. 7-12:

Տնտեսութիւնը ի գործ դրուած Բ. Կոր. Ը. 1-9:

Տնտեսութիւնը վարձատրուած Մատ ԻԵ. 14-23:

Տնտեսութիւնը կառավարուած Ա. Կոր. 16. 1-9:

Տնտեսութիւնը քաջաւերուած Բ. Կոր. Թ. 6-15:

Տնտեսութիւնը երկրպագութեան մէջ Սաղմ. ԶԶ. 1-8:

«Որդեակներս, ոչ թէ խօսքով ու լեզուով սիրենք, հապա գործով ու Յշմարտութիւնով» (Ա. Զմով. Գ. 18):

«Քանզի շատ են անկնազանդները, ունայնութիւն խօսողները» (Տիտ. Ա. 10):

ՅՈՒՆԻՍ 23.—

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՄԻՍԻՈՆԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դաս Գործ. Ա. 6-8: ԺԳ. 1-12:

Կարգալ Սաղ. ԿԷ.

Քրիստոնէական միսիոնարութեանց հեղինակութիւնը Յարուցեալ Տէրոջ իր համբառնալէն անմիջապէս առաջ իր աշակերտաց տուած հրամանէն կը բղխի Մատթ. ԻԸ. 19, 20:

Ասիկա առաջին գործնական քայլն էր մօտ քսան դարեր առաջ Աբրահամի եղած խոստմանը կատարուելուն Ծննդ. ԺԲ. 1-3:

«Սերունդ» բառը որ Ծննդ. ԻԲ. 18ի վերահաստատուած խոստման մէջ կը յիշուի՝ յետագային Աստուծոյ կողմէ երկրի բոլոր ազգերու օրհնուելուն համար իբր ամենամեծ միսիոնարը գործածուած առաքեալին կողմէ բուն ինքն քրիստոսի հետ կը նորնացուի (Գաղ. Գ. 16):

Կարելի է նկատել թէ Աստուծոյ բարեկամը (Բ. Մնաց. Ի. 7: Յակ. Բ. 23) ինքն ալ ունէր զարմանալի աստիճանով մը ռահվիրայ միսիոնարի մը յաջողութեան համար անհրաժեշտ եղող հաւատքը եբր. ԺԱ. 8. ու թէեւ նա խոստումին բուն իսկ իր օրերուն մէջ կատարուելուն ունէր ողջ նշան մը չտեսաւ, բայց նա ուրախացաւ տեսնելով «Քրիստոսի օրը» Յովհ. Ը. 56, Որուն միջոցով աշխարհածաւալ օրհնութիւնը պիտի զար:

Նախորդ պատգամաւորութեան մը ընթացքին առաքեալները որոշ կերպով հրաման առած էին միայն «Ժարայէլի տանը կորսուած ոչխարներուն երթալ» Մատթ. Ժ. 5, 6, բայց իր վերջին պատուէրին մէջ Տէրը կրկին շեշտեց հին խոստումին լեցունութիւնը՝ հրամայելով անոնց «Աւետարարանը քարոզել բոլոր ստեղծուածներուն» Մարկ ԺԶ. 15: «Բոլոր ազգերը աշակերտել» Մատթ. ԻԸ. 19:

Այս միսիոնարութեան յաջողութեան պայմանը եւ երաշխաւորութիւնը Տէրոջ հետեւեալ խոստումն է.—

«Ահա ամէն օր ես ձեզի հետ եմ, մինչեւ աշխարհի վերջը» Մատթ. ԻԸ. 20:

ՅՈՒՆԻՍ 30.—

ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՕՐԷՆՔԻ ՏԱԿ

Դաս Հռով. ԺԴ. 13-21: Ա. Կոր. Ը. 9-13:

Կարգալ Գաղ. Ե. 16-24:

Հռովմի քրիստոնեաները բաժնուած էին զաղաքաւորով այնպիսի խնդիրներու մէջ, որոնք կ'երեւին Հռով. ԺԴ. 1-6ի մէջ: Մէկ փարթին զորոնք մենք նեղմիտներ պիտի կոչէինք, հաւա-

նաբար հրէութենէ ապաշխարածներ, կ'ուզէին օրէնքը եւ շնորհքը միացնել: Ուրիշ փարթի մը, որոնք լայնամիտներն էին, «միայն շնորհք, բոլորէ շնորհք» կ'ըսէին: Ուրիշ փարթի մը որոնց համար վէճ բացուած էր, «հաւատքի մէջ տրկարներն էին»: Պէտք չէ մոռնալ թէ ասոնց աւելն ալ Յշմարիտ քրիստոնեաներ էին:

Վէճի առարկայ եղող կէտերն էին.—

1. Ուտել կամ խմել (Հոով. ԺԴ. 24, հաւանաբար Կորնթոսի մէջ եղածին նման՝ կուռքերու զոհուածներ):

2. Տօնական օրերու պահուիլը (Հոով. ԺԴ. 5, 6, բաղդ. Կող. Բ. 16):

Նեղմիտները կ'ըսէին, «Պիտի ընես կամ պիտի չընես»: Լայնամիտները կ'ըսէին թէ (Մովսէսի) օրէնքին լուծէն ազատուած ըլլալով՝ իրենք ազատ էին «ինքզինքնին հաճեցնելու»: Տկարնեքը (ըլլայ հաւատքի մէջ Հոով. ԺԴ. 1, ըլլայ գիտութեան մէջ Ա. Կոր. Ը. 7) դիւրութեամբ մէկ կամ միւս կողմէն կ'ազդուէին. բնականաբար ասոնք շատ քիչ Յշմարիտ ազգութիւններէն, վասնզի փոխանակ ուղիղ յառաջ երթալով ճամբուն մէկ կողմէն միւսը երթալով ետ կը մնային:

Նեղմիտներուն Պօղոս Առաքեալ կը գրէ թէ իրենք պէտք չէ դատեն (պէտք չէ դատապարտեն զանոնք որ իրենցմէ տարբեր տեսակէտներ ունին):

Լայնամիտներուն նա կը գրէ թէ իրաւ է թէ իրենք Մովսէսի իշխանութեան տակ չեն ալիւս բայց աւելի բարձր օրէնքի մը՝ Քրիստոսի իշխանութեան տակ են (Հոով. ԺԴ. 8, 10): Ասոնք ինքզինքնին հաճեցնելու չէին (Հոով. ԺԵ. 1) հապա իրենց ընկերները (Հոով. ԺԵ. 2) Քրիստոս ինքը ասոր մեծ օրինակը եղաւ (Հոով. ԺԵ. 3):

Իսկ սկիւրները պարտին հետեւիլ ոչ թէ Տէրոջ ծառաներուն հապա բուն իսկ Տէրոջ: Ինքզինքնին Տէրոջ յանձնած ըլլալով անոնք պէտք չէ ալիւս յանձնուին իրենց հանգիւսած ամէն ազդեցութեան եւ վարդապետութեան ամէն հովերուն (Եփես. Դ. 14):

ԹԱՐԳՄ.

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՄԱՍԱՄ ՔՕՆԹԷՍԻ ԵՐԱՁԸ


Մատամ Քօնթէս հետեւեալը կը պատմէ իր դարձին վրայ: Երբ ինք (7) եօթը տարեկան էր, իր ծնողքը շատ անգամ իր փրկութեան մասին կը խօսէին, ըսելով թէ, «Պէտք է որ Յիսուսը իր անձնական Փրկիչը ընտրէր, երկինք մտնելու համար»: Սակայն ինք կը խորհէր թէ քանի որ իր ծնողքը քրիստոնեայ էին, ինք ալ կրնար անոնց հետ երկինք երթալ:

Օր մը այս մտածումներով անկողին գնաց ու հետեւեալ երազը տեսաւ:

Դատաստանի օրը եկեր հասեր էր, ու ամէն մարդ աճապարանքով դրախտ մտնել կ'ուզէր: Ինք ալ հոն մտնելու համար իր աչքերը չորս կողմ պտտեցնելով՝ գտաւ իր մայրը: Իր թեւը անոր թեւին մէջ անցուց ու զայն լաւ մը սեղմելով դէպի ներս յառաջացաւ: Յանկարծ առջեւին ելաւ փառաւոր հրեշտակ մը, հոն իրենց քով կանգ առաւ ու իր աչքերը փոքրիկ աղջկան յառելով ըսաւ մօրը, «Հոս ի՞նչ գործ ունի այս աղջիկը, ի՞նչ իրաւունքով ներս կը մտնէ»: Այս խօսքերուն վրայ աղջկան ձեռքերը թուլցան, ինքնաբերաբար մօրմէն զատուեցաւ ու դողահար մնաց առանձին: Ասոր վրայ արթննալով, խորապէս ազդուած, հասկեցաւ թէ իր ծնողաց արդարութիւնը իրեն օգուտ մը չունէր, ու պէտք էր Յիսուսի թափած արիւնին վատահիլ, որ այնքան կը սիրէր մանուկները: Նոյն օրը այս աղջիկը բացաւ իր սիրտը Ասոր սիրոյն առջեւ, ընդունեց զԱյն, ու Ասոր սիրոյն փոխարէն իր ամբողջ կեանքը նուիրեց ու մեծնալով եղաւ հոգեւոր պաշտօնեայի մը կինը, աւետարանի ջերմ տարածող մը եւ շատ մը անկեալ զաւակներու մայրը, շատ մը հիւանդներու մխիթարիչը, հոգեւորապէս կարօտներու ճշմարիտ խորհրդատու մը: Ինք նաեւ խմբագիրն է գեղեցիկ եւ օգտաշատ Ֆրանսերէն թերթի մը, որ արժանի է մուսթ խանելու ամէն Ֆրանսախօս հայ ընտանիքի յարկէն ներս: Անունն է, «La Bonne Revue», Digne, (Bases Alpes) France.

Թարգ. ՊԶՏԻԿՆԵՐՈՒ

ԲԱՐԵԿԱՄՈՒՀԻՆ



ՎԵՐՆԵՐ

Ուրախալի լուր մը մանուկներուդ:

Դուք գիտէք որ մեծ մարդոց համար շատ գիրքեր ու թերթեր կը տպուին, ու անոնք կը կարգան իրենց յարմար ու նորանոր բաներ: Գիտուն եւ ուսումնական շատ մարդիկ կան, որոնք առտընէ մինչեւ իրիկուն նաեւ զիշերուան քանի մը ժամերը կը կարդան ու կը գրեն: Թերեւս տեսած էք այնպիսի խոշոր գիրքեր, զորոնք դուք գետնէն իսկ չէք կրնար վերցնել: Մեծ մարդիկ զանոնք կը կարդան եւ ատոր համար է որ շատ բաներ գիտեն:

Դուք հիմա բաւական հասկցած ըլլալու էք թէ կարդալուն եւ սորվելուն մէջ շատ հաճոյք կայ, ուստի անոնք որ նոր գիրք մը կը գնեն՝ մասնաւոր հաճոյք մը վայելելու համար է որ դրամ կուտան: Հարկաւ բոլոր մարդիկ այսպէս չեն, բայց անոնք որ կարդալ շատ կը սիրեն՝ ընծիրցասէր կը կոչուին:

Մանուկներու մէջ ալ ուշիմ եղողները ընթերցասէր կ'ըլլան: Սակայն ցաւալի է որ ձեր փափաքին գոհացում տալու համար մանկանց յատուկ բաւական գիրքեր չկան: Ձեր դասագիրքերէն զատ շատ քիչերնիդ էք որ բարեբախտ էք «Բանբեր»ը ունենալու, ու անոր մէջ ձեզի համար գրուած պատմութիւնները կարդալու: Ահա ուրախալի լուր մը ըսելու պատճառը այս է, որ զձեզ «սիրելի հայ դ. ւաղներս» կոչող քոյր մը, նպատակ ունի ձեզի յարմար գիրքեր տպելու: Ի՞նչ կ'ըսէք, ուրախալի լուր մը չէ՞ ասիկա:

Հիմա, որ այս լուրը առիք, անշուշտ կը փափաքիք գիտնալ թէ ի՞նչ գիրքեր տպուած են: Եթէ Տէրը յաջողցնէ, ձեզի միշտ լուր պիտի տրուի գիրքերուն անունները: Դեռ նոր սկսած է, եւ արդէն երկու շատ գեղեցիկ գիրքեր տպուած են: Թիւ 1-ը կը կոչուի «Խօսեցէք ճշմարտութիւնը», որ դպրոցական պատանիի մը կրած փորձութեան մը պատմութիւնն է եւ կը սորվեցնէ քաջ ըլլալ՝ ճշմարտութիւնը խօսելու, երբ ատիկա զքեզ շատ ամէցնէ ալ: Իսկ թիւ 2-ը Վէրնըր անունով Յիսուսի փոքրիկ աշակերտի մը կենսագրութիւնն է:

Չարմանալի տիպար տղայ մը եղած է Վէրնըր: Ընդամէնը ութը տարի տպրոզ այս գաւաղը Տէր Յիսուսի օգտակարապէս ծառայող եւ օրհնարէր հոգի մը եղած է: Իր պատկերն ալ՝ զրքին սկիզբը գրուած՝ կը վկայէ թէ իր մասին գրուածները շատ ճշմարիտ են: Այդ զրքոյկը մէկ մը կարդալով կը կարգացուի, մէկ մըն ալ պատկե-

րին նայելով: «Վերնըր»ը կարգացող մեծ մարդեր իսկ կը փափաքին անոր նմանող եղած ըլլալ, բայց ալ՝ անկարելի է անոնց՝ մեծնալէ յետոյ մանկութեան կեանքը սկսիլ ու Վէրնըրի պէս ապրիլ: Ուստի քանի որ դուն տակաւին Վէրնըրի տարեկից ու հասակակից ես, նայէ որ անոր նման կանուխ հասակէդ ապաշխարես ու Յիսուսի յանձնուիս: Վէրնըրի բոլոր փափաքը եղած է Յիսուսը ճանչնալ ու շարունակ Սնոր վրայով լսել: Անիկա դեռ կարգալ չսորված Սր. Գիրքը շատ կը սիրէր ու երբ կարդալ սորվեցաւ, Ս. Գիրքը իր ամենէն թանկագին զանձը ըրաւ: Անիկա մէկ ու կէս տարի գործածեց իր Սուրբ Գիրքը, բայց եթէ մարդ մը զանիկա տեսնէր, պիտի կարծէր թէ հոռու քարոզիչի մը Ս. Գիրքն է: Առանձնական աղօթքի նուիրուող տղայ մըն էր, որ աղօթածողովներու մէջ ալ՝ համբուրելի գեղեցկութիւն մը կը բերէին իր վրայ իր աղօթքները: Ութը տարեկանէն պակաս մանուկներ ալ թերթիկներ կրնան ցրուել եղեր, վասնզի Վէրնըր միշտ այս ծառայութիւնը կ'ընէր, անիկա ժպտուն դէմքով ու շատ քաղաքավարութեամբ մարդոց մօտենալով կը հարցնէր, «Կ'ուզէ՞ք Տէր Յիսուսի մասին գեղեցիկ բան մը կարդալ»: Անիկա նաեւ քարոզիչ էր: Բոլոր լըծութիւնով իր ընկերներուն կը բացատրէր Սուրբ Գրքին խօսքերը ու կը համոզէր զանոնք որպէսզի Տէր Յիսուսը սիրեն: Աւելի դարմանալի բան մը՝ փոքրիկ տղու մը համար՝ իր նամակներ գրելու ընդունակութիւնն էր: Թերեւս այս բանին քաղցրութիւնը դուն մեծնալէդ յետոյ իմանաս, ուստի հիմակուրնէ գիտցիր թէ Տէր Յիսուսի համար՝ նամակներ գրելը գործելու անմասն միջոց մըն է: Տէր Յիսուսի շնորհքով դեռ ուրիշ շատ բարեմասնութիւններ ունեցող մանչ մը եղած է Վէրնըր: Կարգալ զրքոյկը ու խնդրէ Սատուածէ որ Վէրնըր մըն ալ քեզ ընէ:

Գեղեցիկ այս զրքոյկը երկու սուր. դահ. կ'արժէ, որ մեր ֆրանս. դրամով ութը սուր կ'ընէ (ի՞նչ տօնա): Բայց այդ դրամը որ «Վէրնըր» մը զընելու համար պիտի տաս, երկու օգտակարութիւն պիտի ունենայ: Առաջին՝ պիտի նպաստ տայ ուրիշ գիրք մ'ալ տպուելու: Երկրորդ՝ քաջալերութիւն պիտի տայ Օր. Հետվիկ Պիւլի, թէ իրօք «սիրելի հայ գաւաղները» կը փափաքին Վէրնըրի նմանող ըլլալ:

Լ. Ս.

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie, 39 Rue St. - Savournin Marseille

ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷջ

(Շարժամիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷ—Հովիտ' (Վեր.) Յ. Ն. Ղալարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 13 45ին քարոզածողով, 13 R. Delille

15 30ին աղօթածողով, 11, Rue de l'Eclipse

8. 30 ին կիր. դաս մեծերու » »

Մանկանց համար

Կիր. դասեր ժամը 9. 30ին քաղաքին մէջ

Սէն ժուլիէն եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ

Լէզ Օլիվ, Սէն Ժէրոմ, Ս. Միքի, Ալք, Պուլ

վար ժոռո մասնաւոր բնակարաններու մէջ:

Շարժամիջի ժողովներ

Բ. շր. ժամը 2ին Սէն Մարտին,

Գ. շր. ժամը 2ին Սէն ժուլիէն եւ Լէզ Օլիվ

Գ. շր. 19 30ին քաղաքը 11, Rue de l'Eclipse

Ե. շր. ժամը 20ին Սէն Ժէրոմ

Ուր. ժամը 20ին Camp Victor Hugo

Սէն Լուի.—Քարոզիչ Պատ. Վախան Սահակեան

Chapelle Evang. Arm. Bd. Escalon, St. Loup

Կիր. ժամը 8ին մանկանց կիր. դաս:

9. 30ին Ս. գրական ուսումնա.

16 ին քարոզածողով:

Սէն ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 16ին աղօթածողով:

ԼԱ ՍԻՈԹԱ.—Քարոզիչ Պատ. Ս. Պագգալեան,

24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով

Ֆրանս. եկեղեցիին մէջ,

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը:

.....

ԲՕՆՏ ՕՊԷԼԵԱՍ—Հովիտ' Պատ. Ա. Փափագեան

Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

Սէն Փիէր.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՈՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ—Հովիտ Բրոֆ. Գ. Գ. Խայիկեան

55 Ave. Jean Jaurès Bourg les Valence

(Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս

եկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ—Հովիտ' Պատ. Ժ. Պարսումեան,

18, Rue du Dr. Rebate

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,

5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebate.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

.....

ՍԷՆԹ ԷՖԻԷՆ—Քարոզիչ Պատ. Ի. Աբրահամեան

2. Place de la Pareille.

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով

51 Rue de la République.

17ին աղօթածողով

Արմէ տիւ. Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

.....

ԲԱՐԻՉ—Հովիտ' Պատ. Զ. Բ. Պուտարեան,

10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 14 30ին քարոզածողով

37 Rue Tournefort Paris 5^e

Metro Mouhe Aut. K

Ամսոյն Գ. կիրակին ժամը 16. 30ին Ե.

Ք. Ը. երկսեռ միութեանց ժողովները

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulinaux

ԱԼՖՕՐՎԻԼ.—Քարոզիչ Պր. Մ. Վէրիլեան

25 Rue Blanch, Alfortville

Կիր. ժամը 15. 30ին պաշտամունք

Rue des Brochets, Alfortville

Ժամը 4ին Կիր. դաս

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

Միջ-ընթերցողական օժանդակութիւն

Ի սրտէ խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ Ձեզի որ զիս ուրախացնելու, ու մանաւանդ հոգեւոր երջանկութիւնս չխանգարելու համար ինծի սիրելի եղող «Բանբեր»էն զիս չզրկեցիք: Աստուած կրկնապատիկը վարձատրէ Ձեզ ու թերթը ինծի նուիրող անձը...:

Իրաւ որ ինծի համար շատ մեծ ամօթ մըն է ու շատ դժուարաւ կրցի համոզել ինքզինքս թէ պէտք է որ ընդունիմ «Բանբեր»ը, քանի որ նուէր մըն է...

Պիտի չմոռնամ այս մեծ շնորհքը զոր ինծի ըրիք: Եթէ ունեցայ պատեհութիւններ ու առաջուան յաջողութիւնս, անպայման պիտի յիշեմ «Բանբեր»ը:

Տէրը վարձատրէ զՁեզ եւ ապարդիւն չթողու Ձեր շնորհքը ու աշխատանքը...:

Թէեւ ձեզի գրաւոր իմաց տուեր էի որ 1935 տարուան համար բաժանորդագրութիւնս չպիտի կրնամ նորոգել, սակայն ներկայիս խորապէս կը զգամ որ «Բանբեր»ին յօդուածները օրհնութեան աղբիւր եղած են ինծի համար: Մ'անաւանդ փորձութեանց մէջ սփոփուած եմ անոնցմով: Ուստի սրտի ուրախութեամբ կը փութամ նորոգել բաժանորդագրութիւնս:

Լիօնէն մեզի լուր կը տրուի Պարսումեան եղբորմէն թէ վիւրիոյ Սիւռ Պուրպօնի մէջ քանի մը քոյրեր կարդալով «Բանբեր»ի (թիւ 4ի) 4րդ էջի նամակագիր քրոջ մասին, կամաւորապէս իրենց մէջ հաւաքած են 85 ֆրանք եւ խմբագրութեանս միջոցաւ պիտի ղրկեն:

Ձեռք ճանչնար այդ քոյրերը, բայց մեր մաս-

նաւոր շնորհակալութիւնները կը յայտնենք իրենց այս քրոջ կողմէ, որու անունը չենք կըրնար յիշել հոս, եւ կը խոստանանք որ զրամբ մեր ձեռքը հասածին պէս իսկութեամբը ղրկենք իրեն:

Տէր Յիսուս զՁեզ ամէն բարի գործերու մէջ հաստատէ սիրելիներ:

Խնդրանք խմբագրութիւնէս.—

Այս տարի «Բանբեր»ի հրատարակութենէն իւրաքանչիւր թիւէ 100 օրինակ կ'աւելնայ: Արդեօք չկա՞ն մեր շրջանակներուն մէջ անձեր զորոնք պիտի կարենայինք հետաքրքրել «Բանբեր»ով: Եթէ անոր օգտակարութիւնները թուենք իրենց, անշուշտ պիտի հետաքրքրուին եւ առնեն ու վերջն ալ օգտուին ու զմեզ օրհնեն:

Ուստի, սիրելի, այս թիւը առածիդ պէս մըտքիդ առջեւ անցուր բոլոր քու ծանօթներդ: Թերեւս մէկը կամ միւսը որ մտքէդ անցնի, անմիջապէս հարցուր իրեն եւ պիտի տեսնես որ քու խորհածէդ աւելի զիւրաւ պիտի համոզուի կարգալ հոգեւոր թերթ մը եւ անմիջապէս բաժանորդագրէ զայն:

Այս օժանդակութիւնը մեզի համար ալ շատ արժէք կը ներկայացնէ: Նախ որ մեր քով ամուլ չեն մնար այն զրութիւնները, որոնք օգտակար ըլլալու սահմանուած են: Իսկ միւս կողմէ մեր նիւթական պարագաները աւելի հաստատուն հիմերու վրայ կը դրուին:

Ուրեմն այս ամսուան մէջ 100 նամակ կ'ակնկալենք, որոնց մէջ ըլլան 100 նոր բաժանորդներու փափաքը:

Կ'ակնկալենք եւ կ'սպասենք եւ զիտենք որ ամօթով չպիտի մնանք:

ՄՏՍՑԱՆԻ

«Վիթոլ Սրբաւոյ» Պուլկարահայ Տարեգիրքը Ա. Տարի: 342 մեծադիր էջերով զանազան բովանդակութեամբ, հատոր մը, որուն գինն է Ֆրանսայի համար 25 ֆրանք:

Հասցէ.—

B. Assadour, Rue Serdika 19
Sofia (Bulgarie)

Rédaction du "PANPÈRE"
7, Rue Papère - MARSEILLE (France)

Imp. Y. ARMEN & Cie
39, Rue St.-Savournin - MARSEILLE